

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ԱԽՈՒՐՅԱՆԻ ԿՈՈՊԵՐԱԿՆ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԿԱՌՆՈՒՏԻ ԱՆԴԵԶԻՏՆԵՐԻ
ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ԱՆԴԵԶԻՏԱԲԱԶԱԼՏՆԵՐԻ ԿԱՌՆՈՒՏ-1
ՏԵՂԱՄԱՍԻ /ԶԱՐԴԻՉ ԿԱՅԱՆՔԻ/ ՇՐՋԱԿԱ
ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Ախուրյանի կոոպչին» ՍՊԸ Տնօրեն



Ա.Տոնոյան

2021թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՍՓՈՓ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿԸ.....	4
2. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ.....	4
3. ՆԱԽԱԳԾԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԶՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ.....	6
3.1. Զրոյական տարբերակ	6
3.2. Քննարկվող տարբերակներ	6
4. ԾՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՎԻՃԱԿԸ.....	7
4.1 Ընդհանուր տեղեկություններ տեղանքի մասին	7
4.2. Ռելիեֆ, երկրաձևաբանություն	11
4.3. Կլիմա	13
4.4. Հողեր	15
4.5 Զրային ռեսուրսներ	18
4.6 Մթնոլորտային օդ.....	19
4.7 Բուսական և կենդանական աշխարհ	22
4.8 Բնության հատուկ պահպանվող տարածքներ	25
4.9. Սոցիալ-տնտեսական պայմանները.....	27
5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	29
5.1. “Կառնուտ 1” տեղամաս	29
5.1.1 Ընդհանուր տեղեկատվություն	29
5.1.2. Հանքավայրի մշակման եղանակի ընտրումը.....	30
5.1.3. Բացահանքի արտադրողականությունը, աշխատանքի ռեժիմը և	30
ձառայման ժամկետը.....	30
5.1.4. Բացահանքի բացումը	31
5.1.5. Մակարացման աշխատանքներ	31
5.1.6. Արդյունահանման աշխատանքները.....	32
5.1.7. Բարձման աշխատանքներ	35
5.1.8. Լցակայանային տնտեսություն	35
5.1.9. Բացահանքի ջրամատակարարումը և ջրհեռացումը.....	36
5.1.10 Աշխատանքի պաշտպանությունը : Արդյունաբերական սանիտարիան և անվտանգության տեխնիկան	34
5.2. Ջարդիչ կայան	37
5.2.1. Օգտագործվող հումքը, արտադրողականությունը և արտադրանքը.....	37
5.2.2. Տեխնոլոգիական և տեխնիկական լուծումները	39
5.2.3. Զրամատակարարում և ջրահեռացում	40
6. ԾՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԻԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ.....	41
6.2.....Կառնուտ 1 տեղամաս	41

6.2.1.	Մթնոլորտային օդ.....	41
6.2.2.	Ջրային ավազան.....	45
6.2.3.	Հողային ծածկույթ.....	45
6.2.4.	Աղմուկ.....	46
6.2.5.	Բուսական և կենդանական աշխարհ.....	48
6.3.	Ջարդիչ կայան.....	48
6.3.1.	Ազդեցություն մթնոլորտային օդի որակի վրա.....	48
6.4.	Ջրային ռեսուրսներ.....	53
6.4.1.	Ջրօգտագործում.....	53
6.4.2.	Ջրահեռացում.....	55
6.5.	Թափոններ.....	56
6.6.	Ազդեցությունը կենդանական և բուսական աշխարհի վրա.....	59
6.7.	Սոցիալական ազդեցությունը.....	59
6.8.	Կումուլյատիվ (հավաքական) ազդեցություն.....	60
7.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՄԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	61
7.2.	Մթնոլորտային օդ.....	61
7.3.	Ջրային ռեսուրսներ.....	64
7.4.	Հողային ռեսուրսներ.....	64
8.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՆԱՄԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆԸ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	71
9.	ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՕՂԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՑՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՎԹԱՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ	74
10.	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ	77
11.	ՍՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ	81
12.	ՀԱՆՔԻ ՓԱԿՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ	87
12.2.	Հանքարդյունահանման համալիրի փակման ծրագիրը, նպատակները և խնդիրները.....	87
12.3.	Բնապահպանական միջոցառումներ.....	88
12.4.	Սոցիալ - տնտեսական միջոցառումներ.....	88
12.5.	Փակման գործընթացի կազմակերպումը.....	89
12.6.	Մշտադիտարկումների ծրագիր.....	89
12.6.1.	Մշտադիտարկումների նպատակը.....	89
12.6.2.	Դիտակետերի տեղադրումը.....	90
12.6.3.	Մշտադիտարկման դիտակետերի ցանցը և բնական միջավայրի բաղադրիչների վերահսկողությունը.....	91

1. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿԸ

Սույն հաշվետվությունը կազմված է “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” ՀՀ օրենքի և ՀՀ բնապահպանության նախարարության “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննական կենտրոն” ՊՈԱԿ կողմից տրված տեխնիկական առաջադրանքի պահանջների հիման վրա:

Հաշվետվությունում ներկայացված է ՀՀ Շիրակի մարզի Կառնուտի անդեզիտների հանքավայրի “Կառնուտ 1” տեղամասի և ջարդիչ կայանքի աշխատանքների նկարագրությունը, գործունեության տեղանքների բնակլիմայական և սոցիալական ելակետային տվյալները:

Նկարագրված են գործունեության տեխնոլոգիական բնութագրերը, օգտագործվող հումքը և տեխնիկական միջոցները, դիտարկվել են այլընտրանքային տարբերակները, ներառյալ զրոյական տարբերակը:

Գնահատվել են նախատեսվող գործունեության բնապահպանական և սոցիալական ռիսկերը, որոնց վերլուծության արդյունքում մշակվել են բացասական ազդեցությունը կանխող կամ նվազեցնող միջոցառումներ:

Աշխատանքների պատշաճ կազմակերպման նպատակով մշակվել է բնապահպանական կառավարման պլան: Մշակված միջոցառումների արդյունավետությունը վերահսկելու համար ներկայացվել է մշտադիտարկումների (մոնիթորինգի) ծրագիր:

Քանի որ ջարդիչ կայանքը նախատեսված է Կառնուտի անդեզիտների հանքավայրի հանքաքարի վերամշակման համար և գտնվում է հանքավայրի մերձակայքում, հաշվետվությունում դրանք ներկայացվել են համատեղ՝ որպես հանքարդյունահանման համալիր :

2. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է

բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում:

- *ՀՀ Սահմանադրություն* (ընդունված 06.12.2015թ.) – 12-րդ հոդվածը <<Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը>> սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների բանական օգտագործման վերաբերյալ
- Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրք
- Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգիրք
- Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգիրք
- Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրք
- “Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության մասին” Հայաստանի Հանրապետության օրենք (2014)
- Մթնոլորտային օդի պահպանության մասին ՀՀ օրենք
- «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք
- Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի մասին օրենք
- Հայաստանի Հանրապետության կենդանական աշխարհի մասին օրենք
- «Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004)
- «Հողօգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008թ)
- «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք
- Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենք (2006)
- ՀՀ կառավարության 29.01.2010 թ. N71-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կենդանիների Կարմիր Գիրք
- ՀՀ կառավարության 29.01.2010 թ. N72-Ն որոշմամբ հաստատված ՀՀ բույսերի Կարմիր Գիրք
- ՀՀ կառավարության 2 նոյեմբերի 2017 թվականի “Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի N1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին” N 1404-Ն որոշում
- ՀՀ կառավարության 31 հուլիսի 2014 թվականի “Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների (այսուհետ՝ օբյեկտներ) պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին” N 781-Ն որոշում:
- ՀՀ կառավարության 14.08.2008թ. 967-Ն որոշումը:

Համաձայն <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով սահմանված դասակարգումների, նախատեսվող գործունեությունը (*մետաղական, այդ թվում՝ ռադիոակտիվ օգտակար հանածոյի արդյունահանում եւ (կամ) հանքաքարի, հանքանյութի վերամշակում, ներառյալ՝ պոչամբարներ կամ պոչատարեր*) դասվում է <<Ա>> կատեգորիայի գործունեության տեսակներին և ենթակա է փորձաքննություն՝ երկու փուլով:

3. ՆԱԽԱԳԾԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԶՐՈՅԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ

3.1. Զրոյական տարբերակ

Զրոյական կամ առանց գործողության տարբերակ նշանակում է, որ որևէ փոփոխություն տեղի չի ունենում և Կառնուտի անդեզիտների հանքավայրի անդեզիտաբազալտների Կառնուտ-1 տեղամասը չի շահագործվում: Այս դեպքում՝

- Հանքաքարի արդյունահանման և ջարդիչ կայանքի շահագործման բնապահպանական և սոցիալական ազդեցության հետ կապված ռիսկեր կամ վտանգներ չեն առաջանա,
- Կենսամիջավայրի վրա լրացուցիչ տեխնածին ներգործություն և ճնշում չի առաջանա:

Մյուս կողմից զրոյական տարբերակի ընտրության դեպքում չեն իրականանա նաև մի շարք հնարավորություններ, այդ թվում.

- Նախագծի իրականացման ընթացքում նոր աշխատատեղերի ստեղծման և դրա արդյունքում տեղի բնակչության եկամուտների ավելացման հետ կապված հնարավորություններ չեն առաջանա:
- Տարածաշրջանի ենթակառուցվածքի բարելավում և օժանդակ սպասարկող ցանցի ընդլայնում տեղի չի ունենա:

3.2. Քննարկվող տարբերակներ

Քանի որ նախատեսվող գործունեության ուղղակի նպատակը հանքավայրի շահագործումն է, դիտարկվել են հանքաքարի վերամշակման հետ կապված, ստորև ներկայացված 2 տարբերակները.

Ա. Պայմանագիր է կնքվում մոտակա ջարդիչ կայանի հետ և հանքաքարի վերամշակումը կատարվում է այլ վայրում: Այդպիսիք կարող են լինել Ախուրյանի կազմակերպությունները, որոնք գտնվում են 5.6 – 8կմ հեռավորության վրա:

Այս տարբերակի առավելություններն են.

- Կարիք չի առաջանա կատարել կապիտալ ներդրումներ
- Չի պահանջվի կատարել կայանի սպասարկման և վերանորոգման աշխատանքներ:

Տարբերակի թերությունները`

- Մեծածավալ տրանսպորտային տեղափոխումներ, որոնց ընթացքում.
 - կպահանջվեն զգալի ֆինանսական միջոցներ
 - կառաջանան դիզելային վառելիքի այրման արգասիքների արտանետումներ
 - կառաջանան փոշու արտանետումներ
 - կինտենսիվանա ճանապարհային երթևեկությունը
- կլինի որոշակի կախվածություն գործընկեր կազմակերպության առաջարկվող պայմաններից:

Բ. Կառուցվում է սեփական ջարդիչ կայան:

Այս տարբերակի առավելություններն են.

- Էականորեն նվազում են տրանսպորտային ծախսերը
- հնարավոր է կարգավորել և վերահսկել հանքաքարի վերամշակման արդյունավետությունը:

Տարբերակի թերությունները`

- Կապիտալ ներդրումների անհրաժեշտություն
- կայանի սպասարկման ծախսեր
- փոշու արտանետումներ:

Վերլուծելով նշված տարբերակների դրական և բացասական կողմերը, ինչպես ֆինանսատնտեսական, այնպես էլ բնապահպանական, ընտրվել է երկրորդ տարբերակը:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՎԻՃԱԿԸ

4.1 Ընդհանուր տեղեկություններ տեղանքի մասին

Կառնուտի անդեզիտաբազալտների հանքավայրի «Կառնուտ-1» տեղամասը և ջարդիչ կայանքը վարչական տեսակետից գտնվում են ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի ենթաշրջանում՝ մոտ, Կառնուտ գյուղից 0.5կմ արևելք, Ախուրյանից 5.6կմ հյուսիս-արևելք, Հովիտ գյուղից 2.5կմ հյուսիս-արևմուտք:

Հանքավայրի տարածքը գյուղատնտեսական նպատակների համար անօգտագործելի է, նշանակությունը ընդերքօգտագործման:

ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի անդեզիտաբազալտների հանքավայրի «Կառնուտ-1» տեղամասի մակերեսը կազմում է 3.45հա:

Հանքավայրի կոորդինատներն են WGS -84 համակարգով՝

- | | |
|----------------|--------------|
| 1) x = 4516785 | y = 8412625, |
| 2) x = 4516977 | y = 8412679, |
| 3) x = 4516932 | y = 8412904, |
| 4) x = 4516866 | y = 8412938: |

Ջարդիչ կայանի տեղամասը զբաղեցնում է 0.709557 հա մակերեսով տարածք և սեփականության իրավունքով պատկանում է սույն գործունեության ձեռնարկող՝ «Ախուրյանի կոոպչին» ընկերությանը /սեփականության վկայականի պատճենը կցվում է/: Կայանի համար նախատեսված տարածքը հանդիսանում է երկարավուն ուղղանկյուն, որի երկու եզրերի կոորդինատներն են WGS -84 համակարգով՝

- | | | | |
|----------------|--------------|----------------|--------------|
| 1) x = 4516726 | y = 8412682, | 2) x = 4516700 | y = 8412671: |
|----------------|--------------|----------------|--------------|

Հանքարդյունահանման համալիրի հողակտորի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության: Գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների: Տեղամասը հողածածկ և ասֆալտապատ ավտոճանապարհներով կապված է Կառնուտ, Ախուրյան, Հովիտ, Բասեն, Կամո գյուղերի և Գյումրի քաղաքի հետ:

Տարածքը տեղակայված է Շիրակի գոգավորության հյուսիս-արևմտյան հատվածում, 1633-1705մ բացարձակ բարձրությունների վրա:

Լեռնագրական տեսակետից տարածաշրջանը հարում է Շիրակի գոգավորությանը, այն տեկտոնական խախտումներով սահմանափակված լայնարձակ իջվածք է, որի հյուսիսային մասով ձգվում է Շիրակի լեռնաշղթան (Եզնասար լ., 2250մ), արևելքում այն եզրավորվում է Փամբակի լեռնաշղթայի արևմտյան լանջերով, հարավում՝ Արագածի հրաբխային լեռնազանգվածով: Շիրակի գոգավորության մակերևույթը բավականին հարթ է և քիչ մասնատված:

Ջրագրական հիմնական միավորը Ախուրյան գետն է իր հիմնական՝ Ջաջուռ և Քառանգու վտակներով: Ախուրյանը լեռնային գետ է, սկիզբ է առնում Վերին Ախուրյանի գոգավորությունում գտնվող Արփի լճից, պատկանում է Արաքսի համակարգին, բնութագրվում է ձնա-անձրևային սնումով և անկայուն ռեժիմով: Ջրերն օգտագործվում են ոռոգման (Շիրակի ջրանցք) և էներգետիկական (Գյումրի ՀԷԿ) նպատակներով:

Տարածաշրջանի տնտեսության առաջատար ճյուղը գյուղատնտեսությունն է: Ջարգացած է հացահատիկային բույսերի և բանջարաբուստանային կուլտուրաների մշակումը: Արդյունաբերությունը ներակայացված է սննդի և գյուղմթերքների մշակման ոչ մեծ ձեռնարկություններով, որոնք կենտրոնացված են հիմնականում Գյումրի քաղաքում:

Շրջանը հարուստ է հրաբխային ծագման շինանյութերի (բազալտ, անդեզիտա-բազալտ, հրաբխային տուֆ և խարամ,) խոշոր պաշարներով, որոնց հենքի վրա զարգացած է շինանյութերի տարածաշրջանային տնտեսական նշանակություն ունեցող արդյունաբերություն:

Շրջանում մեծ տարածում ունեն լեռնատափաստանային սևահողերը, անտառները գրեթե բացակայում են և տիրապետող են տարախոտահացազգի բույսերը: Կենդանական աշխարհը նույնպես ներկայացված է լեռնատափաստանային տեսակներով՝ աղվես, գայլ, նապաստակ, կզաքիս, զանազան կրծողներ և թռչուններ:

Տարածաշրջանը բնութագրվում է բարեխառն կլիմայով՝ համեմատաբար տաք ամառներով, ցուրտ ձմեռներով և կայուն ձնածածկույթով: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը $+7^{\circ}\text{C}$ է, հունվարինը՝ -8°C (բացարձակ նվազագույնը՝ -35°C), հուլիսինը $+18^{\circ}\text{C}$ (առավելագույնը՝ $+30^{\circ}\text{C}$ -ից $+34^{\circ}\text{C}$): Անսառնամանիքային օրերի թիվը 120-160 է: Տարեկան տեղումների միջին քանակը 480մմ է, առավելագույնը դիտվում է մայիսին՝ 980մմ: Ամռանը տիրապե-տում են լեռնային քամիները, իսկ ձմռանը՝ անհողմ եղանակը: Հաճախակի են երաշտները:

Շրջանն էլեկտրաֆիկացված և մասամբ գազաֆիկացված է:

Շրջանը գտնվում է սեյսմիկ անկայուն գոտում, որտեղ երկրաշարժերի առավելագույն հզորությունը հասնում է 9 բալի, ըստ Ռիխտերի 12 բալանոց սանդղակի:



Նկար 1. Տեղանքի իրադրային սխեմա

4.2. Ռելիեֆ, երկրաձևաբանություն


Տեղամասի երկրաբանական կտրվածքի հիմքում, վերին պլիոցենի ընդհանուր կտրվածքում (կտրվածքով վեր) դուրբիտային բազալտները փոխարինվում են ավելի թթու ապարներով՝ անդեզիտաբազալտներով: Այս հասակի ապարները տարածված են Կառնուտ գյուղի մերձակայքում և ծածկվում են ստորին չորրորդականի լճային նստվածքներով:

Տեղամասը բնութագրվում է թեք բլրային ռելիեֆով և զուրկ է անտառային ծածկույթից:

Տեղամասի տարածքը հարավից հյուսիս ու արևմուտքից արևելք ձգվում է համապատասխանաբար մոտ 60-200մ և 230-320մ ու սահմանափակվում է ընդերքի ուսումնասիրության թույլտվությամբ ամրագրված սահմաններով:


Տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին պլիոցենի հրաբխային և ժամանակակից դելյուվիալ առաջացումները:

Տեղամասի երկրաբանական կտրվածքը ներկայացված է հետևյալ տեսքով (ներքևից վերև) նկար 2-ում:




Նկար 2

Շրջանի լեռների երկրաձևաբանական և մակերևույթի թեքության անկյունների սխեմատիկ քարտեզները բերվում են ստորև նկար 3-ում:




Նկար 3.

Տարածքը սողանքավտանգ չէ: Մոտակա հայտնի սողանքային մարմինը գտնվում է տեղամասից 2.9կմ հարավ-հարավ-արևելք: ՀՀՇՆ II-ի (06.02.20061) համաձայն տեղամասի տարածքը գտնվում է սեյսմիկ 3-րդ գոտում ($\alpha = 0.3g$) / նկար 4/:



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Կողաշարժեր
- Վարմետմներ
- Վերմետմներ
- Ուժեղ երկրաշարժերի օջախներ
- M = 7,3 Երկրաշարժի մագնիտուդը
- 1988 Երկրաշարժի տարեթիվը



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

ԵՐԿՐԱՇԱՐՋԵՐԻ ՀՆԱՐՎՈՐ ՈՒԺԳՆՈՒԹՅՈՒՆ (Մ) ԵՎ ԳԵՏՆԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՀՈՐԻՋՈՆԱԿԱՆ ԱՐԱԳԱՅՈՒՄՆԵՐ (Գ) (500 ՏԱՐՈՒՄ ՉԳԵՐԱՋԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՆԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆԸ 90%)

- | | Մ | Գ |
|--|------------|-----------|
| | 10 և ավելի | 0,4 - 0,5 |
| | 9 | 0,3 - 0,4 |
| | 8 - 9 | 0,2 - 0,3 |
| | 8 | 0,1 - 0,2 |
- Գ - միավորների միջազգային համակարգում մ/վրկ²
 Մ - բալ (MSK - 64)

Նկար 4.

4.3. Կլիմա

Շրջանի կլիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամռանը տաք է համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 600-700մմ:

Գերակշռում են հյուսիսային քամիները 2,8 մ/վրկ միջին արագությամբ:

Օդի միջին տարեկան ջերմաստիճանը կազմում է + 5°C: Ամենատաք ամառվա ամսվա (օգոստոս) միջին ջերմաստիճանը կազմում է + 17°C, ամենացածր ամսվա՝ (հունվար) -12.6°C: Անսառնամանիք ժամանակաշրջանը մինչև 200 օր: Բացարձակ նվազագույն ջերմաստիճանը կազմում է -35°C, իսկ բացարձակ առավելագույնը՝ + 33°C:

Օդի ամսական և տարեկան միջին ջերմաստիճանները

Աղյուսակ 4.1

Չերմաստիճանի բնութագիրը	Ամսական ջերմաստիճանը 0°C												Տարեկան
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
Միջինը	-8.4	-2.6	-2.3	4.5	9.9	15.3	16.7	17.0	13.3	7.7	0.9	-5.2	5.0

Օդի միջին նվազագույն ջերմաստիճանը

Աղյուսակ 4.2

Կայան	Միջին նվազագույն ջերմաստիճանը ըստ ամիսների 0°C												Տարեկան
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
Գյումրի	-12.6	-11.1	-6.5	0.0	4.9	8.3	11.7	12.2	8.1	2.8	-2.9	-8.8	0.5

Օդի միջին առավելագույն ջերմաստիճանը

Աղյուսակ 4.3

Կայան	Միջին առավելագույն ջերմաստիճանը ըստ ամիսների 0°C												Տարեկան
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
Գյումրի	-3.7	-2.2	2.1	9.9	15.7	19.7	22.8	23.8	20.1	13.7	5.5	-0.9	10.5

Խոնավությունը

Տեղումների միջին տարեկան գումարը հասնում է 450.0-600.0մմ: Տեղումների տարեկան գումարի 30.0-40.0 ՀԳ հիմնականում լինում է ապրիլ և մայիս ամիսներին:

Ձյունածածկույթը

Շրջակայքի համար բնորոշ է ձյունառատ ձմեռը, հաճախ ձյան ծածկույթը հասնում է մինչև 80.0սմ-ի: Ձյան մեջ ջրի առավելագույն պաշարը 70.0մմ:

Քամիները

Դիտարկվող շրջակայքին բնորոշ են լեռնա-հովտային քամիները, որոնք հատկապես արտահայտված են ամռանը: Քամու հիմնական ուղղություններն են հյուսիսային, հյուսիս-արևելյան և արևելյան: (Հաճախ լինում է անդորր 45.0%):

Քամու միջին արագությունը, մ/վրկ

Աղյուսակ 4.4

Կայան	Միջին ամսական արագությունը, մ/վրկ												Տարեկան
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
Գյումրի	1.5	2.3	3.4	4.0	3.7	4.5	5.6	6.3	5.4	2.9	2.1	1.4	3.6

Աղյուսակ 4.5

Ամիս	Քամու կրկնվողությունն ըստ ուղղությունների և անդորրի, %								
	ՀՍ	ՀՍ Արլ	Արլ	ՀՎ Արլ	ՀՎ Արլ	ՀՎ Արմ	Արմ	ՀՍ Արմ	Անդորր
I	180	10.0	25.0	1.0	50	8.0	15.0	18.0	78.0
IV	13.0	11.0	38.0	1.0	6.0	11.0	9.0	11.0	41.0
VII	9.0	20.0	62.0	1.0	1.0	1.0	1.0	5.0	15.0
X	14.0	11.0	39.0	10	8.0	10.0	7.0	10.0	52.0
Տարի	11.0	15.0	47.0	1.0	5.0	6.0	6.0	9.0	46.0

4.4. Հողեր

Տեղանքուն զարգացած են սևահող ալրային կարբոնատային հողերը, որոնց ենթատիպերի տարածումը ներկայացված է նկար 5-ում: Այս հողերում առանձին ծագումնաբանական հորիզոնների քիմիական բաղադրությունը, մասնավորապես


սիլիցիումի, ալյումինիումի, երկաթի, կալիումի պարունակության տեսակետից առանձնապես խիստ չի տարբերվում, նկատվում է դրանց հավասարաչափ կուտակում հողի պրոֆիլի սահմաններում: Հողային լուծույթի ռեակցիան գլխավորապես չեզոք է (pH-ը տատանվում է 7-ի սահմաններում): Կլանող համալիրը հազեցված է հիմնականում Ca-ով և Mg-ով: Բնորոշ է կնձկային ստրուկտուրա: Հարուստ են ընդհանուր ազոտով (0.15-0.35%), ֆոսֆորական թթվով (0.15-0.26%) և կալիումով (1-2%): Տիպիկ սևահողերի A հորիզոնում հումուսի պարունակությունը տատանվում է 4.5-9.0% սահմաններում: Հումուսը հարստացված է համախառն ազոտով (C:N=9-12), ակտիվ բաղադրիչներից գերակշռում են հումինաթթուները: Կլանված կատիոնների գումարը 100գ հողում կազմում է 35-45մէկվ: Հողալկալային կատիոններից գերակշռում է կալցիումը: Սևահողերի քիմիական և ֆիզիկամեխանիկական հատկությունները բերված են ստորև աղյուսակ 4.6-ում:

Աղյուսակ 4.6

Հողի տիպը	Հորիզոնները և խորությունները, սմ	Տոկոսներով			Կլանված կատիոնների գումարը, մգ/էկվ 100գ հողում
		հումուս	ընդհանուր		
			ազոտ	CaCO ₃	
Սովորական (կարբոնատային) սևահողեր	A ₁ 0-15	4.32	0.34	0.5	37.2
	A ₂ 15-29	2.77	0.23	0.6	36.1
	B ₁ 29-45	2.56	0.18	0.6	29.2
	B ₂ 45-62	2.09	0.15	1.6	37.2
	C 62-80	1.99	0.15	1.7	24.8
Լվացված Սևահողեր	A ₁ 0-23	6.67	0.34	չկա	32.2
	A ₂ 23-43	6.59	0.32	չկա	33.4
	B ₁ 43-68	5.32	0.31	չկա	37.3
	B ₂ 68-83	1.64	0.20	չկա	28.5
	C 83-100	0.90	0.19	40.3	-

Գետահովտադարավանդային հողերում ծագումնաբանական հորիզոնները թույլ են արտահայտված: Ունեն պարզ շերտավոր կառուցվածք, մեծ հզորություն և թեթև մեխանիկական կազմ (ավազային, կավավազային) և հատիկակնձկային ստրուկտուրա: Հումուսի պարունակությունը 1,5-2-ից մինչև 4-6%: Հողայն լուծույթի

Ռեակցիան հիմնականում չեզոք է կամ թույլ հիմնային: Կլանման տարողությունը մեծ չէ 15-25 մ.էկվ 100գ հողում:



Պ Ա Յ Մ Ա Ն Ա Կ Ա Ն Ն Շ Ա Ն Ն Ե Ր

6	Մարգագետնատափաստանային սևահողանման մնացորդային հագեցած
10	Մարգագետնատափաստանային տիպիկ խճաքարային
28	Սևահող կրագերծված խորքային կարբոնատային
29	Սևահող կրագերծված կոպճային
32	Սևահող տիպիկ ալրային կարբոնատային
33	Սևահող ալրային կարբոնատային
56	Գետահովտադարավանդային մարգագետնացած կոպճային

Նկար 5

Այս տիպի հողերը ունեն գլխավորապես կավավազային մեխանիկական կազմ: Կլանման տարողությունը բարձր է, կլանված կատիոններում գերակշռողը Ca-ն է: Ռեակցիան չեզոք է կամ թույլ հիմնային: Բնութագրվում են բարելավ ֆիզիկական և ջրաֆիզիկական հատկություններով, լավ արտահայտված ստրուկտուրայով:

Այս տիպի հողերը ունեն գլխավորապես կավավազային մեխանիկական կազմ: Կլանման տարողությունը բարձր է, կլանված կատիոններում գերակշռողը Ca-ն է: Ռեակցիան չեզոք է կամ թույլ հիմնային: Բնութագրվում են բարելավ ֆիզիկական և ջրաֆիզիկական հատկություններով, լավ արտահայտված ստրուկտուրայով:

Կարբոնատային հողերում առանձին ծագումնաբանական հորիզոնների քիմիական բաղադրությունը, մասնավորապես սիլիցիումի, ալյումինիումի, երկաթի, կալիումի պարունակության տեսակետից առանձնապես խիստ չի տարբերվում, նկատվում է դրանց հավասարաչափ կուտակում հողի պրոֆիլի սահմաններում:

Հանքարդյունահանման տարածքում հողաբուսական շերտը բացակայում է: Մակաբացման ապարները ներկայացված են 0.4-ից 0.6 մ (միջինը 0.49 մ) հզորության անդեզիտաբազալտների տարաչափ բեկորներ պարունակող դեյուվիալ առաջացումներով:

4.5 Ջրային ռեսուրսներ

Շիրակի մարզի հիմնական ջրային մարմինն Ախուրյան գետն է, որը սկիզբ է առնում Արփի լճից և հանդիսանում է Արաքս գետի առաջին վտակը: Գետը հանդիսանում է ՀՀ արևմտյան տարածաշրջանում հիմնական ջրայն մարմինը և գետի ջուրը հիմնականում օգտագործվում է ոռոգման և արդյունաբերական նպատակով:

Գործունեության համար ենթակա տարածքներում ստորերկրյա, գրունտային ջրերը բացակայում են:

Վերին հոսանքում այն անցնում է ճահճապատ ավերով, այնուհետ ընդունում է մի քանի մանր վտակներ, ապա որպես ջրառատ գետ մտնում է Շիրակի դաշտէ Այստեղ Ախուրյանին միանում են Արագածի լանջերից սկիզբ առնող մի քանի գետակներ, որոնցից ամենամեծը Մանթաշն է (ստորին հոսանքում՝ Կարկաչան կամ Կարկաչուն) Աղին կայարանից մի փոքր հյուսիս՝ Կարսագետն ընդունելուց հետո, Ախուրյանը կտրում է Արագածի արևմտյան փեշերը և, խորացնելով իր հունը, քարքարոտ ավերի մեջ շարունակում է հոսել մինչև Արաքսի հետ միանալը: Ախուրյանն ունի 186կմ երկարություն՝ Ախուրյանի ավազանն ընդգրկում է Ախուրյանի ավազանը ՀՀ սահմաններում՝ 2784կմ² (Արաքսի ավազանի մակերեսն Ախուրյանի գետաբերանի հատածքում կազմում է 22100կմ², որից Ախուրյան վտակինը^ա 9670կմ²): Մակերևութային ջրերի աղտոտվածության մոնտորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի մոնիտորինգի և տեղեկատվության կենտրոն» (ՇՄՄՏԿ) ՊՈԱԿ-ի կողմից: Ախուրյան գետի ջրի որակի մոնիտորինգային դիտարկումները Գյումրի քաղաքին մոտ իրականացվում են 2 մոնիտորինգային դիտակետերում՝ 0.8 կմ ք. Գյումրիից վերև (33) և 5կմ ք. Գյումրիից ներքև (34): Դիտակետերում ջրերի որակը գնահատվել է 4-րդ դասի՝ համաձայն 2017 թ.-ի ՇՄՄՏԿ-ի տարեկան ամփոփագրի (Աղ.3):

Ախուրյան գետի ջրի որակի ցուցանիշները 2018թ.-ին:

Աղյուսակ 4.6.

Գետավազան	Դիտակետի տեղադրությունը/ Դիտակետի համարը	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դասը	Ջրի որակի ընդհանրական դասը
-----------	--	--------------------	--------------------------	----------------------------

Ախուրյան	0.8 կմ ք. Գյումրիից վերև (33)	Ֆոսֆատ իոն, մոլիբդեն	3-րդ	4-րդ
		Երկաթ, ԿՆ*	4-րդ	
	5 կմ ք. Գյումրիից ներքև (34)	Ամոնիում ի- ոն, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, մոլիբ- դեն, երկաթ, ԸԱԱ, ընդհա- նուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
		Նիտրիտ իոն, ԿՆ	4-րդ	

* Կախված նյութեր

4.6 Մթնոլորտային օդ

Օդային ավազանի աղտոտվածությունը կախված է երկու գործոններից՝ տարածքի օդերևույթաբանական պայմաններից և տարբեր օբյեկտների արտանետումների քանակից:

Համայնքի օդային ավազանի աղտոտման հիմնական աղբյուրներն են՝ ավտոտրանսպորտը և ցուրտ եղանակին՝ ջեռուցման համակարգերը:

ՀՀ տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի («Հայէկոմոնիթորինգ»-ի) կողմից:

Սակայն Կառնուտ բնակավայրում մշտական (ստացիոնար) դիտակայաններ կամ պասիվ նմուշառիչներ չեն տեղադրված և օդային ավազանի աղտոտվածության վերաբերյալ տվյալներ չկան:

Վերլուծելով գոյություն ունեցող իրավիճակը՝ ներկայումս տարածքում առկա արդյունաբերական գործունեությունները և վերջիններիս բնակավայրերից հեռու գտնվելը, կարելի է ենթադրել, որ տեղանքի օդային ավազանը աղտոտված չէ:

Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ հաշվարկային եղանակով: Դրա համար «Էկոմոնիթորինգ» -ը առաջարկում է համապատասխան ձեռնարկ-ուղեցույց¹: Ըստ այդ ուղեցույցի մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար, որոնց թվին է դասվում Կառնուտ բնակավայրը, օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են՝

¹ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ. «ՀՀ բնակավայրերի մթնոլորտային օդի աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները» ուղեցույց-ձեռնարկ: Երևան-2011

- Փոշի՝ 0.2 մգ/մ³;
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ³;
- Ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ³;
- Ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ³:

ԲՆԱԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Տարածքը գտնվում է շինարարակլիմայական II ենթագոտում, ունի չափավոր, երկարատև տաք ամառով և ցուրտ ձմեռով կլիմա: Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը հասնում է 36°C: Օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը հասնում է -36°C: Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը կազմում է 528մմ: Գերակշռում են 3.5-5.0մ/վրկ արագության, արևելյան ուղղության քամիները:

Ջրան ծածկոցի հաստությունը կազմում է 61սմ, ճնշումը՝ 70 կգս/մ²: Հողի սառչելու խորությունը հասնում է 92սմ:

Ստորև բերված աղյուսակները բնութագրում են քաղաքի կլիմայական ռեժիմն ըստ «Գյումրի» օդերևութաբանական կայանի (բացարձակ բարձրությունը 1600 մ) տվյալների:

Տվյալները բերված են ըստ ՀՀՇՆ II-7-01-96 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթղթի:

ՕՂԻ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԸ

Բնակավայրի բաց. բարձր.	Միջին ամսական, ըստ ամիսների												միջին տարեկան	բացարձակ նվազագույն	բացարձակ առավելագույն
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Գյումրի	-9.0	-7.2	-1.2	6.7	11.7	15.5	19.5	19.5	15.2	8.5	1.7	-5.1	6,3	-36	38

ՕՂԻ ԽՈՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Բնակավայրը	Օդի հարաբերական խոնավությունը (%) ըստ ամիսների												միջին տարեկան	միջին ամսական ժ. 13-ին
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII		
Գյումրի	83	82	76	68	69	66	62	60	63	70	75	84	72	71

ՄԹՆՈՆՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՁՅՈՒՄԱԾԱԾԿՈՒՅԹԸ

Բնակավայրը	Տեղումների քանակը միջին ամսական/օրական առավելագույնը, մմ												տարեկան	տասնօրյա առավելագույնը	ձյան ծածկույթը	
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			օրերի թիվը	ջրի առավելագույն քանակը ձյան մեջ (մմ)
Գյումրի	23/17	25/26	30/24	55/30	90/53	71/55	46/40	36/47	31/64	39/39	28/25	24/32	498/64	61	94	129

ՔԱՄԻ

Բնակավայրը	Մթնոլորտային ճնշումը Գրկ	Տարվա ամիսը	Քամու ուղղությունների կրկնելիությունը % Քամու միջին արագությունը մ/վրկ								Անհողմությունների կրկնելիությունը %	Քամու միջին ամսական արագությունը մ/վրկ	Քամու միջին տարեկան արագությունը մ/վրկ	Ուժեղ քամիներով (>15 մ/վրկ) օրերի քանակը	Քամու հաշվարկային արագությունը (մ/վրկ), որը հնարավոր է մեկ անգամ տարիների ընթացքում		
			ըստ ուղղությունների												20	50	100
			հս.	հս. արևելյան	արևելյան	հվ. արևելյան	հվ.	հվ. արևմտյան	արևմտյան	հս. արևմտյան					14/0.5		
Գյումրի	846	I	15/0,7	18/0,6	8/0,5	3/0,6	13/0,8	19/0,5	10/0,5	14/0,5	85	0,6	1,3	30	24	27	29
		IV	14/1,8	17/1,4	11/1,9	4/1,6	12/1,7	19/1,7	12/1,5	11/1,5	61	1,7					
		VII	19/1,9	39/1,9	24/2,2	2,2/1,6	2/1,14	4/1,4	5/1,2	5/1,16	56	2,1					
		X	18/0,8	20/0,7	9/0,7	2/0,6	12/0,8	17/0,6	13/0,6	9/0,7	79	0,8					

ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՐԱՉԱՓԵՐ

ՏԱՐՎԱ ՑՈՒՐՏ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՐԱՉԱՓԵՐԸ

Բնակավայրը	Օդի ջերմաստիճանը, °C								Ամենացուրտ ամսվա խոնավությունը (%)		Մթն. տեղումները և գրունտի սառածության խորությունը		Քամի			
	Ամենացուրտ օրվա	Ամենացուրտ հնգօրյակի	Ամենացուրտ ժամանակաշրջանի միջինը	Բացարձակ նվազագույնը	Ամենացուրտ ամսվա օրական միջին ամպիտուդը	Տևողությունը		միջին ամսական	միջն ամսական ժ. 15-ին	Տեղումների քանակը Լոյեմբերմարտ ամիսներին (մմ)	Գրունտի սառչման առավելագույն խորությունը (սմ)	Գերակշռող ուղղ. դեկտեմբեր-փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղ. հունվարին (մ/վրկ)			
	Ապահովվածությունը					միջին ջերմ. ժամանակաշրջանի	միջին ամսական									
Գյումրի	-29	-26	-25	-22	-9.0	-36	11.1	118/5,7	189/2.1	208/1.0	83	71	130	140	հս.	0,6

ՏԱՐՎԱ ՏԱՔ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՐԱՉԱՓԵՐԸ

Բնակավայրի անվանումը	Օդի ջերմաստիճանը (°C)					ամենատաք ամսվա հարաբ. խոնավությունը (%)		մթնոլորտային տեղումները (մմ)		քամի	
	ապահովվածությամբ		բացարձակ առավելագույնը	ամենատաք ամսվա միջին առավելագույնը	ամենատաք ամսվա միջին օրական ամպիտուդը	միջին ամսական	միջին ամսական ժ. 15-ին	տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր	տեղումների օրվա առավելագույնը	գերակշռող ուղղութ. հունիս-օգոստոս ամիսներին	միջին արագությունների նվազագույնը ըստ ուղղ. հունիսին (մ/վրկ)
Գյումրի	28	29	38	26,7	14.1	60	39	368	64	Հս արլ..	1,9

4.7 Բուսական և կենդանական աշխարհ


Գործունեության ենթակա տարածքները գտնվում են ՀՀ Շիրակի ֆլորիստիկական շրջանում, որտեղ բուսականության տիպը հիմնականում տափաստանային է, ինչպես նաև մարգագետնատափաստանային և մարգագետնային: Հիմնական բնական բուսածածկը՝ հացազգային և տափաստանահացազգային է՝ բոտրիոխլոյա (*Bothriochloa ischaemum* (L.) Keng), շյուղախոտեր (*Festuca valesiaca* Gaudin, *F. ovina* L.), բարակոտնուկներ (*Koeleria albovii* Domin, *K. cristata* (L.) Pers.), , փետրախոտը (*Stipa capillata* L., *S. lessingiana* Trin. Et Rupr., *S. tirsia* Stev.), սեզը (*Elytrigia trichophora* (Link) Nevski), մակարդախոտ իսկականի (*Galium verum* L.) մասնակցությամբ: Շիրակի մարզում բուսական աշխարհը խիստ բազմազան է, որին նպաստել են բարձրությունների մեծ տարբերությունները, լեռնալանջերի տարբեր կողմնադրությունները և մակերևույթի թեքությունները:

Շիրակի մարզում կան շուրջ 40 հազվագյուտ և անհետացող բուսատեսակներ, որոնք գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում: Տարածքի բուսականությունը պատկանում է հիմնականում տափաստանայինի տիպին, գետահովիտներում աճում են ակացիա, թխկենի, հացենի և այլ ծառատեսակներ: Գերակշռում են լեռնատափաստանային սևահողերը՝ տարախոտա-հացազգի խոտաբույսերի տարածմամբ: Հացահատիկային զանազան խոտաբույսերի ֆորմացիաներ են առկա:

Լեռնային տափաստանները ներկայացված են երեք՝ փետրախոտային (*Stipa*), շյուղախոտային (*Festuca*) և ցորնուկային (*Bromus*) տափաստանների ֆորմացիաներով:

Ներկայումս Շիրակի ֆլորիստիկ գոտում անտառային բուսականությունն իսպառ բացակայում է: Ոչ անտառածածկ հողերը նախկինում ծածկված են եղել անտառներով, որի վկայությունն է թփային մացառների առկայությունը:

Շիրակի ֆլորիստիկական շրջանում առկա բուսածածկում հանդիպում են՝ բարդի (*Populus*), ակացիա (*Robinia*), թխկի (*Acer*), թթենի (*Morus*), վայրի ծիրանենի (*Armeniaca*), սզնի (*Crataegus*), ուռատերև տանձենի (*Pyrus salicifolia*), սովորական և սրապտուղ հացենի (*Fraxinus excelsior*, *F. oxycarpa*), աղեղնաեզր ասպիրակ (*Spiraea crenata*), արևելյան ծորենի (*Berberis orientalis*), սովորական չմենի (*Cotoneaster integerrima*), վրացական ցախակեռաս (*Lonicera iberica*), սովորական լեռնաչամիչ (*Ephedra procera*), թփային հասմիկ (*Jasminum fruticans*), թեղի (*Ulmus*), ալուչա (*Prunus*), փշատենի (*Elaeagnus*), ուռենի (*Salix*), մասրենի (*Rosa*):



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Մարգագետնային բուսականություն

- 1 Բարձրալպյան տարախոտա-հացազգա-բոշխային (գորգեր) մասնակցությամբ՝ *Campanula tridentate* Schreb., *Carex tristis* Bieb., *Taraxacum stevenii* DC., *Plantago saxatilis* Bieb., *Colpodium araraticum* Tarutv., *Poa alpina* L., *Carum caucasicum* (Bieb.) Boiss., *Nardus glabriculum* Sakalo, *Sibbaldia parviflora* Willd.
- 2 Ֆածրալպյան (ենթալպյան) հացազգիների և տարախոտա-հացազգային, մասնակցությամբ՝ *Bromopsis variegata* (Bieb.) Holub, *Hordeum violaceum* Boiss. et Huet, *Anemonastrum fasciculatum* (L.) Holub, *Betonica macrantha* C. Koch, *Veronica*, *Gentiana*, *Cephalaria*, *Inula*, *Myosotis* ցեղի տեսակների հետ համաստեղ

Մարգագետնալպափասսրանային բուսականություն

- 3 Մասնակցությամբ՝ *Festuca versicolor* Tausch, *F. ovina* L., *F. valesiaca* Gaudin, *Phleum pratense* L., *Hordeum violaceum* Boiss. et Huet, *Carex humilis* Leys, *Trifolium ambiguum* L.

Տափասրանային բուսականություն

- 9 Հացազգային, տարախոտա-հացազգային, մասնակցությամբ՝ *Festuca valesiaca* Gaudin, *F. ovina* L., *Koeleria albovii* Domin, *K. cristata* (L.) Pers., *Bothriochloa ischaemum* (L.) Keng, *Stipa capillata* L., *S. lessingiana* Trin. et Rupr., *S. tirsia* Stev., *Elytrigia trichophora* (Link) Nevski, *Galium verum* L., տեսակներ *Agropyron*, *Andropogon*, *Scabiosa*, *Veronica*, *Artemisia*, *Achillea*, *Astragalus*

Նկար 6.

Տարածաշրջանում ընդհանուր առմամբ տարանջատվում են բուսականության հետևյալ տիպերը.

Մարգագետնային բուսականություն

1. -բարձր ավաիական տարախոտա-հացազգիա-բոշխային /գորգեր/ *Campanula tridentata* Schreb., *Carex tristis* Bieb., *Taraxacum* DC., *Plantago saxatilis* Bieb., *Colpodium araraticum* Tarutv., *Poa alpina* L., *Carum caucasicum* /Bieb/ Boiss., *Nardus grabriculmis* Sakolo, *Sibbaldia parviflora* Willd.-տեսակների մասնակցությամբ,
2. -Ցածրալայան /ենթալայան/ հացազգիների և տարախոտահացազգային, մասնակցությամբ *Bromopsis variegata* /Bieb/ Holub, *Hordeum violaceum* Boiss. Et Huet, *Anemonastrum fasciculatum* /L/ Holub, *Betonica macrantha* C. Koch, *Veronica Gentiana*, *Cephalaria*, *Inula Myosotis* Ցեղի տեսակի հետ համատեղ:

Մարգագետնատափաստանային բուսականություն

-Մասնակցությամբ *Festuca cersicolor* Tausch, *F.ovina* L., *F. valesiaca* Gaudin, *Phleum pratense* L., *Hordeum violaceum* Boiss. Et Huet, *Carex humilis* Leys, *trifolium ambiguum* L.

Տափաստանային բուսականություն

- հացազգային տարախոտա-հացազգային, մասնակցությամբ`
- *Festuca valesiaca* Gaudin, f. *Ovina* L., *Koeleria albovii* Domin, *K. Cistata* /L./ Pers., *Bothriochloa ischaemum* /L/ Keng, *Stipa capillata* L., *S. Lessingiana* Irin et Rupr., *S. Tirma* Stev., *Elytrigia trichophora* /link/ Nevski, *Galium verum* L., *Agropyron*, *Andropogon*, *Scabiosa*, *Veronica*, *Artemisia*, *Achillea*, *astragalus*. և այլ տեսակների մասնակցությամբ:

Տարածքը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում:

Բուն տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն արձանագրվել:

Կառնուտի անդեզիտների հանքավայրի շրջանի լեռնատափաստանային լանդշաֆտային գոտու կենդանական աշխարհը բնութագրվում է համեմատաբար աղքատ և միատեսակ անողնաշարավոր կենդանիներով^a ծղրիղներ ու մորեխներ: Հերպետոֆաունան ներկայացված է հայկական մողես (*Lacerta armeniaca*), Դալի մողես (*L. dahli*), Վալենտինի մողես (*L. valentini*), Նախյան մողես (*L.nairensis*), հայկական իծ (*Vipera raddei*), տափաստանային իծ (*V. erivanensis*) խայտաբղետ իծանման սահնօձ (*Coluber ravergieri*), իսկ ջրամբարների և գետերի շրջակայքում հանդիպում են ջրային լորտուն (*Natrix tnessellata*), սովորական լորտուն (*N. natrix*): Թռչուններից առավել լայն տարածում ունեն ճնճղուկանմանները (*Passeriformes*) և ճուռականմանները (*Falconiformes*): Կաթնասուններից, բացի ամենուրեք տարածված տեսակներից նապաստակ (*Lepus europaeus*), աղվես (*Vulpes vulpes*), գայլ (*Canis lupus*), հիմնականում

լայն տարածում ունեն կրծողների կարգի ներկայացուցիչները: Այս գոտին առավել նպաստավոր է մարգագետնային մկան (*M. subterraneus*), կզաքիսի (*Martes foina*), և այլ տեսակների համար:



Նկար 7. Կենդանատեսակներ

Տարածքում ՀՀ կարմիր գրքում գրանցված կենդանիների տեսակներ չեն հայտնաբերվել:

4.8 Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Նախատեսվող հանքավայրի և ջարդիչ կայանի մոտակայքում բնության հատուկ պահպանվող տարածքներ, որտեղ իրականացվում է վտանգված էկոհամակարգերի պահպանություն, չկան:

Տարածաշրջանում առկա է Արփի լիճ բնության հատուկ պահպանվող տարածքը, դրանց չափերի մասին տեղեկատվություն համաձայն ՀՀ կառավարության 2014թ.-ի 1059-Ա որոշման,

ԲՀՊՏ-ի անվանումը	Կառավարության որոշման համարը	Նպատակը	ՀՀ մարզը	Չբաղեցրած տարածքը(հեկտար)
Արփի լիճ	ՀՀ կառավարության 2009 թ. ապրիլի 16-ի N 405-Ն	Արփի լճի Էկոհամակարգի, հազվագյուտ և չվող թռչնատեսակների բնադրավայրերի, Հայաստանի Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պահպանություն	Շիրակ	21 179.3

ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ տարածքի բնության հուշարձանների ցանկը:

Բնության հուշարձաններից Շիրակի մարզի տարածքում հաշվառված են.

Աղյուսակ 4.8.

Հ/Հ	Անվանումը	Գտնվելու վայրը
1	«Ամասիայի» քարանձավ	Շիրակի մարզ, Ամասիա գյուղից 1.5 կմ արլ, Ախուրյան գետի կիրճի աջ ափին, նրա հունից 80 մ բարձրության վրա, ծ.մ-ից 2000 մ բարձրության վրա
2	«Կրիա» քարե բնական քանդակ	Շիրակի մարզ, Երևան-Գյումրի խճուղու ձախ կողմում, Լանջիկ և Մարալիկ բնակավայրերի միջև
3	«Ամասիայի աղբյուր N 2»	Շիրակի մարզ, Ամասիա գյուղից 1.5 կմ հվ-արմ, Ախուրյան գետի կիրճի ձախ ափին, ծ.մ-ից 1750 մ բարձրության վրա
4	«Ամասիայի աղբյուր N 3»	Շիրակի մարզ, Ամասիա գյուղից 1.8 կմ հվ-արմ, Ախուրյան գետի կիրճի ձախ ափին, ծ.մ-ից 1745 մ բարձրության վրա
5	«Գոմերի տակի աղբյուր»	Շիրակի մարզ, Աշոցք գյուղից հվ-արլ ծայրամասում, ծ.մ-ից 1980 մ բարձրության վրա
6	«Աչքասար» աղբյուր	Շիրակի մարզ, Բավրա գյուղից 5 կմ հս-արլ, ծ.մ-ից 2430 մ բարձրության վրա
7	«Զույգաղբյուր» աղբյուր	Շիրակի մարզ, Զույգաղբյուր գյուղից 200 մ արմ, Աշոցք գետակի աջ ափին, ծ.մ-ից 2015 մ բարձրության վրա
8	«Լուսաղբյուր» աղբյուր	Շիրակի մարզ, Հարթաշեն գյուղից 1.2 կմ արլ, Գյումրի-Տաշիր ավտոճանապարհից 150 մ ձախ, ծ.մ-ից 2030 մ բարձրության վրա
9	«Անանուն» աղբյուր	Շիրակի մարզ, Հարթաշեն գյուղի դպրոցից 1.8 կմ հս-արլ, ծ.մ-ից 2180 մ բարձրության վրա

10	«Անանուն» լի «Թագավորակ լ» «Ամասիայի» ջրվեժ «Մանթաշի» ջրվեժներ	Շիրակի մարզ, Արթիկի ենթաշրջան, Ախուրյանի ջրավազանում, ծ.մ-ից 3200 մ բարձրության վրա Շիրակի մարզ, Մանթաշ գետի վերին հոսանքում, ծ.մ-ից 3050 մ բարձրության վրա Շիրակի մարզ, Ախուրյան գետի աջակողմյան վտակի վրա, համանուն գյուղից արլ Շիրակի մարզ, Մեծ Մանթաշ գյուղից 16 կմ հվ-արմ, համանուն գետի աջ վտակի վրա
14	«Դոդոջուն կաղամախու ծառուտներ»	Շիրակի մարզ, Ամասիա գյուղից 3 կմ արմ, ծ.մ-ից 3200 մ բարձրության վրա
15	«Փետրախոտային տափաստան»	Շիրակի մարզ, Ամասիա գյուղից 3 կմ հս-արմ
	<<Ամասիայի աղբյուր 1>> ջրաերկրաբանակ ան հուշարձան	Շիրակի մարզի Ամասիա գյուղից 1.5 կմ հվ-արմ, Ախուրյան գետի կիրճի ձախ ափին, ծ.մ-ից 1735 մ բարձրության վրա:

Նշված բնության հուշարձանները գտնվում են տարածքից 4-ից 15կմ հեռավորության վրա և, հետևաբար, ծրագրավորված աշխատանքները որևիցե կերպ չի անդրադառնա բնության հուշարձանների իրավիճակի վրա:

4.9. Սոցիալ-տնտեսական պայմանները

Շիրակի մարզը Հայաստանի հյուսիս-արևմուտքում գտնվող մարզ է, Գյումրի մարզկենտրոնով: Պետական սահմանքով արևմուտքից սահմանակից է Թուրքիային, հյուսիսից՝ Վրաստանին, արևելքից սահմանակից՝ ՀՀ Լոռու մարզին և հարավից՝ ՀՀ Արագածոտնի մարզին: Մարզի տարածքում են գտնվում Արփի լիճ ջրամբարը, ախուրյանի ջրամբարի հայկական հատվածը և Մանթաշի ջրամբարը: Շիրակի մարզի կենտրոնական և հարավային հատվածում տարածվում է Շիրակի դաշտը, իսկ հյուսիսային շրջանում՝ Աշոցքի սարահարթը, միաժամանակ Շիրակի մարզում են Փամբակի, Բագումի լեռնաշղթաների, Եղնածաղի, Ջավախքի, Արագածի լեռնազանգվածների մի մասը:

Շիրակի մարզը հայտնի է տուֆի, պեմզայի, կրաքարի հանքերով:

Մարզը ռելիեֆի առումով կարելի է բաժանել երկու մասի: Հրաբխային, որն ընդգրկում է Ջավախք-Աշոցքի տարածաշրջանը, իր մեջ ընդգրկելով Ջավախքի և Եղնախաղի լեռնավահանները, Չլդրի լեռները և Աշոցքի սարավանդը: Մյուս մասը կարելի է համարել ծալքաբեկորավոր, որն իր մեջ է ներառում Շիրակի ծալքաբեկորավոր լեռնաշղթան ու Շիրակի դաշտը:

Մարզի տարածքով հոսող խոշոր գետը Ախուրյանն է, որի միայն վերին հոսքի շրջանն է անցնում բուն տարածքով, միջին հոսքի շրջանում այն սահմանային է: Մարզի տարածքում են գտնվում Ախուրյանի համակազին պատկանող Ցոդամարգ,

Իլլի, Կարկաչուն գետակները: Մարզի միակ լիճը Արփան է՝ 22 կմ² մակերեսով, ունի տեկտոնահրաբխային կառուցվածք:

Կործանիչ երկրաշարժի հասցրած ծանր հարվածների հետևանքով ոչնչացվեցին մարզի արդյունաբերական կազմակերպությունների հիմնական միջոցների շուրջ 70%ը,

կտրուկ ընկան արտադրական հզորությունները և տարեց-տարի անընդմեջ նվազեց աշխատողների թվաքանակը:

Անցած ժամանակաշրջանում մարզում իրականացվող ինտենսիվ շինարարությունը մեծ թափ հաղորդեց հանքարդյունաբերության ոլորտին: Ծանրաբեռնվածությամբ աշխատեցին ոչ միայն գործող կազմակերպությունները, ստեղծվեցին և գործեցին նաև շուրջ 20 նոր ընկերություններ:

ՀՀ Շիրակի մարզում գործող արդյունաբերական կազմակերպությունների կողմից 2012թ. թողարկվել է շուրջ 40.7 միլիարդ դրամի արտադրանք: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ թողարկվող արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը կազմել է 93.5%:

Հանրապետությունում թողարկված արդյունաբերական արտադրանքի մեջ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի արդյունաբերական կազմակերպությունների ն բաժին է ընկնում ընդամենը 3.6%-ը:

Մարզում գործող ձեռնարկությունների կողմից թողարկվող արտադրանքը իրացվում է ինչպես Հայաստանում, այնպես էլ ԱՊՀ և արտերկրներում: Մարզի արդյունաբերության մեջ ամենամեծ տեսակարար կշիռն ունեցող մշակող արդյունաբերության ենթաձյուղերն են՝

1. Սննդի, ներառյալ խմիչքների արտադրություն – 85.6%,
2. Մանածագործական և կարի արտադրություն՝ 4.5%,
3. Այլ ոչ մետաղական հանքային արտադրություն–3.4%,
4. Մեքենաների և սարքավորանքի արտադրություն– 2.2%,
5. Գործունեության այլ տեսակներ - 4.3%:

Կառնուտ բնակավայր²

Կառնուտի բնակչությունը՝ 929 մարդ

Կառնուտը արգկենտրոնից գտնվում է 10կմ հեռավորության վրա: Գյուղը տեղադրված է Փամբակի լեռնաշղթայի ստորոտում՝ քարքարոտ ձորում՝ ծովի մակարդակից 1570մ բարձրության վրա: Ունի ցուրտ կլիմա, սակավ տեղումներ: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են մառախուղները և ձնաբքերը: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 600-700մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստանները: Ունի բազալտի պաշարներ, որոնք ունեն արդյունաբերական նշանակություն: Գյուղի հյուսիս-արևելքում պահպանվում է կիսավեր եկեղեցին, որը ենթադրվում է, որ հնագույն շրջանում եղել է

² Շիրակի մարզպետարանի պաշտոնական կայք

հեթանոսական մեհյան, իսկ 4-5-րդ դդ վերածվել է եկեղեցու: Բնակչության նախնիների մի մասը 19-րդ դարում գաղթել է Արևմտյան Հայաստանի Դերջանի գավառից և Կարսի մարզից: 1831 թ-ին գյուղն ունեցել է 151, 1897 թ-ին՝ 965, 1926 թ-ին՝ 1149, 1939 թ-ին՝ 1136, 1959 թ-ին՝ 783, 1979 թ-ին՝ 667 հայ բնակիչ: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքը 2013 թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեցել է 929 մարդ: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 48%, կանայք՝ 52%: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ. մինչաշխատունակներ՝ 33%, աշխատունակներ՝ 51%, հետաշխատունակներ՝ 16%: Ունի 206 տնտեսություն: Ունի դպրոց, բուժկետ, կապի հանգույց: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Գյուղատնտեսական հողահանդակները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահողեր՝ կազմելով 514հա: Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես վարելահողեր, արոտավայրեր՝ կազմելով համապատասխանաբար 146 և 421 հեկտար: Մշակում են հացահատիկային, բանջարաբոստանային, կերային կուլտուրաներ, պտուղներ: Նախկինում զբաղվել են շաքարի ճակնդեղի մշակությամբ, որոնք վերամշակվել է Սպիտակի շաքարի գործարանում: Երկրաշարժի արդյունքում գործարանը հիմնովին ավերվել է և շաքարի ճակնդեղի ցանքերի մակերեսները զգալի կրճատվել են: Զբաղվում են նաև անասնապահությամբ, թռչնաբուծությամբ: Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են դպրոցական գույքի նորացումը, խմելու ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքի իրացումը, գազաֆիկացումը:

5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

5.1. “Կառնուտ 1” տեղամաս

5.1.1 Ընդհանուր տեղեկատվություն

ՀՀ Շիրակի մարզի Կառնուտի անդեզիտների հանքավայրի անդեզիտաբազալտների Կառնուտ-1 տեղամասի պաշարները հաստատվել են ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Ընդերքի գործակալության Պետական ընդերքաբանական փորձաքննության հանձնաժողովի կողմից 2019թ փետրվարի 19-ի թիվ 1 եզրակացությամբ, 2018թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ, B կարգով և 1330,2հազ.մ³ ծավալով:

Հանքավայրի պաշարները՝ անդեզիտաբազալտները իրենց քիմիական կազմով և ֆիզիկամեխանիկական հատկություններով պիտանի են շինարարական խճի (ՀՍՏ ԳՕՍՏ 8267-95) և ավազի (ԳՕՍՏ 8736-2014) արտադրության համար:

Ծառայման ժամկետը ընդունվում է 50 տարի:

Կորզվող պաշարները կազմում են ընդամենը 914.9հազ.մ³

Մույն նախագծով նախատեսվում է.

1. Հանքարդյունահանման աշխատանքները կատարել հորատապայթեցման եղանակով և էքսկավատոր ավտոինքնաթափ համալիրով:

2. Հանքարդյունահանման աշխատանքները կատարել շուրջտարյա աշխատանքային ռեժիմով՝ 260 օր:

3. Կատարել խախտված հողերի լեռնատեխնիկական վերակուլտիվացիա:

- Մարվող պաշարների քանակն է՝ 1330,2 հազ.մ³, տարեկան արտադրողականությունը՝ 26604 մ³ մարվող պաշար:

- Կորզվող պաշարները կազմում են 914.9 հազ.մ³, տարեկան արդյունահանվող պաշարներ՝ 18298 մ³:

Բացահանքի օտարման տարածքը կազմում է 3.45 հա, ծառայման ժամկետը՝ 50 տարի:

5.1.2. Հանքավայրի մշակման եղանակի ընտրումը

Ելնելով հանքավայրի տեղադիրքից, հանքամարմնի տեղադրման պարամետրերից և մակաբացման ապարների ոչ մեծ ծավալներից, տեղամասի մշակումը նախատեսվում է բաց լեռնային աշխատանքներով. հորատապայթեցման աշխատանքներով:

Նախագծվող բացահանքը վերջնական դիրքում ունի հետևյալ պարամետրերը՝

- Ամենամեծ երկարությունը – 323 մ
- Ամենամեծ լայնությունը – 197 մ
- Մակաբացման ապարների միջին հզորությունը – 0.49 մ
- Օգտակար հանածոյի ամենամեծ հզորությունը – 64.4 մ
- Օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարների քանակը՝ - 1330.2 հազ.մ³
- Արդյունահանվող պաշարների քանակը՝ – 914.9 հազ.մ³
- Մակաբացման ապարների քանակը – 13.4 հազ.մ³

5.1.3. Բացահանքի արտադրողականությունը, աշխատանքի ռեժիմը և ծառայման ժամկետը

Բացահանքի աշխատանքային ռեժիմն ընտրվել է ելնելով տեխնիկական առաջադրանքից և կլիմայական պայմաններից: Բացահանքի աշխատանքային ռեժիմն ընդունվում է՝

- աշխատանքային օրերի թիվը տարվա ընթացքում՝ 260 օր
- շաբաթվա աշխատանքային օրերի թիվը՝ 5 օր
- հերթափոխերի թիվը մեկ օրում՝ 1 հերթ.
- հերթափոխի տևողությունը՝ 8 ժամ

Բացահանքի տարեկան, ամսական և օրական արտադրողականությունները բերված են աղյուսակում:

Աղյուսակ 5.1

Հհ	Անվանումը	Չափման միավոր	Միջին արտադրողականությունը		
			տարեկան	օրական	հերթափոխում
I Մարվող պաշար					
1	Անդեզիտազալտներ	մ ³	26604	100.04	102.32
II Արդյունահանվող պաշարներ					
2	Մակաբացման ապարներ	մ ³	268	1.03	1.03
3	Անդեզիտազալտներ	մ ³	18298	70.38	70.38
4	Լեռնային զանգված	մ ³	18566	71.41	71.41

5.1.4. Բացահանքի բացումը

Հանքավայրի բացումը կատարվում է նրա արևելյան՝ 1700.0 բարձրության նիշից:

Նախատեսված է ավտոճանապարհի կառուցում հանքավայրի արևելյան կողմից, նախկին գրունտային ավտոճանապարհի 1670.0մ բարձրության նիշից մինչև բացահանքի 1700.0մ բարձրության հորիզոն (զծ. թերթ Լ-7): Ավտոճանապարհի երկարությունն է՝ 250.0մ, 8մ լայնությամբ, որի ամենամեծ թեքությունն է՝ 112.0%: Հաջորդ 11-20-րդ տարվանից սկսած ավտոճանապարհը կսկսվի 1655.0մ - բարձրության հորիզոնից մինչև 1635.0մ հորիզոնը՝ մինչև բացահանքի հարավ արևմտյան մասը, 50% թեքությամբ, 400մ երկարությամբ, 8մ լայնությամբ: Այնուհետև կիջնի մինչև 1620մ բարձրության հորիզոնը կտրող կիսախրամով՝ 158մ երկարությամբ՝ 94.9% (զծ. թերթ Լ-6):

Հանքաստիճանների բարձրությունն ընդունված է 5.0մ:

5.1.5. Մակաբացման աշխատանքներ

Ժամանակակից առաջացումները առաջացնում են համատարած ծածկոց և ներկայացած են դեյուվիալ նստվածքներով: Դրանց հետախուզված հզորությունը տատանվում է 0.4մ-ից 0.6մ-ի սահմաններում, կազմելով միջինը 0.49մ, որոնք (13400մ³) ավտոինքնաթափով տեղափոխվում է լցակույտ: Տեղափոխման հեռավորությունն է միջինը 0.5կմ: Մակաբացման աշխատանքները նախատեսված է

կատարել $\Delta 3-130$ բուլդոզերի օգնությամբ, որի արտադրողականությունը $800 \text{ m}^3/\text{հերթ}$ է:

Այս ապարները շահագործման տարիներին տեղափոխվում է մինչև 0.5 կմ դեպի բացահանքի հարավային մասում ստեղծվող լցակույտ (զծ. $L-6$), այնուհետև հնարավորություն ստեղծվելուց հետո՝ հանքավայրի շահագործման 46 -րդ տարվանից սկսած դրանք աստիճանաբար տեղափոխվում են հանքավայրի արդեն արդյունահանված 1620.0 մ բարձրության բարձրության հորիզոնի վրա և հարթեցվում:

5.1.6. Արդյունահանման աշխատանքները

ա. Մշակման համակարգերը

Բացահանքը մշակվում է ընդլայնական ընթացաշերտերով, միակող մշակման համակարգով:

- աշխատանքային հանքաստիճանի բարձրությունն ընդունված է 5.0 մ ,
- հանքաստիճանի թեքության անկյունը՝ 80° ,
- հանքակողերի թեքության անկյունը՝ 65° ,
- անվտանգության առափնեների լայնությունը՝ 2 մ :
- աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնությունը՝ 30 մ :

բ. Լեռնակապիտալ աշխատանքներ

Լեռնակապիտալ աշխատանքներն են՝

ա. Հանքավայրի բացումը կատարվում է նրա արևելյան՝ $1700.0 \text{ բարձրության}$ նիշից:

բ. Նախատեսված է ավտոճանապարհի կառուցում հանքավայրի արևելյան կողմից, նախկին գրունտային ավտոճանապարհի 1670.0 մ բարձրության նիշից մինչև բացահանքի 1700.0 մ բարձրության հորիզոն (զծ. թերթ $L-7$): Ավտոճանապարհի երկարությունն է՝ 250.0 մ , 8 մ լայնությամբ, որի ամենամեծ թեքությունն է՝ 112.0% : Հողային աշխատանքների ծավալն է՝ 1350 մ^3 :

գ. Բացահանքի շահագործման շինարարական շրջանում բացահանքում 1700.0 մ բարձրության հորիզոնում բացված պաշարներով ապահովելու համար 990 մ^3 ծավալով մակաբացման ապարները բուլդոզերով հավաքվում է, բարձրվում է ավտոիքնաթափը և տեղափոխվում է դեպի բացահանքի հարավային մասը բացահանքի սահմաններից դուրս՝ $N1$ լցակույտ:

դ. Արդյունաբերական հրապարակի ստեղծում - 150 մ^3

Ավտոճանապարհների անցումը՝ մակաբացման ապարների հավաքումը կուտակումը կատարվում է $\Delta 3-130$ բուլդոզերի օգնությամբ:

զ. Հորատապայթեցման աշխատանքներ

Հանքամարմինը, ըստ պրոֆ. Մ.Պրոտոդյակոնովի սանդղակի, ունի $f=9-12$ ամրության գործակից (կարգը՝ VIII): անդեզիտաբազալտները արդյունահանման համար նախապատրաստելու նպատակով, նախատեսվում է իրականացնել հորատապայթեցման աշխատանքներ՝ հորատանցքային լիցքերի կիրառմամբ: Արտաշափերի մանրացման համար նախատեսվում են պայթանցքային լիցքեր:

Հորատանցքերի հորատման համար ընտրվել է СБУ-100 մակնիշի հորատման հաստոց: Հերթափոխային արտադրողականությունը 30 գծամետր 1 հերթափոխում: Պայթանցքերի հորատման համար՝ ПП-50ББ մակնիշի հորատման մուրճ:

Աղյուսակ 5.2.

ՀՀ	Պարամետրերը	Չափման միավոր	Հորատանցքային լիցքեր
1	2	3	4
1	Ամրության կարգը ըստ պրոֆ Մ.Պրոտոդյակոնովի - ամրության գործակիցը	F	VIII 9-12
2	Հանքաստիճանի բարձրությունը	մ	5
3	Հորատանցքի տրամագիծը	մմ	105
4	Գերհորատումը	մ	0.58
5	Հորատանցքի ընդհանուր խորությունը	մ	5.58
6	Ամենափոքր դիմադրության գիծը	մ	3.85
7	Հորատանցքերի միջև հեռավորությունը շարքում	մ	3.47
8	Հորատանցքերի շարքերի միջև հեռավորությունը	մ	2.99
10	Պայթուցիկ նյութի տեսակարար ծախսը	կգ/ մ ³	0.55
11	Լիցքի քանակությունը հորատանցքում	կգ	36.74
12	Լիցքի քանակությունը 1մ հորատանցքում	կգ	13.66
13	Լիցքի երկարությունը հորատանցքում	մ	2.69
14	Խցանման երկարությունը	մ	2.89
15	Հորատանցքերի շարքերի թիվը	շարք	1÷2
16	Պայթեցվող քանակությունը՝ - ամսական - օրական	մ ³ մ ³	1524.83 70.38

Պայթեցման միջոցներն են՝ պայթուցիկ նյութ իզոլանիտ (94 % սելիտրա, 6% դիզելային վառելանյութ), դետոնացիոն քուղ՝ ապահովության համար կրկնակի, էլեկտրադետոնատորներով կարճ դանդաղեցված պայթեցում:

Որպես պայթեցման միջոցներ ընտրվել են դետոնացիոն քուղ և էլեկտրաճայթիչներ:

Հորատապայթեցման բոլոր աշխատանքները նախատեսվում է կատարել մասնագիտացված հատուկ կազմակերպության ուժերով՝ պայմանագրային հիմունքներով:

Աղյուսակ 5.3

հհ	Պարամետրերը	Չափման միավորը	Պայթանցքային լիցքեր
2	Պայթանցքերի խորությունը	մ	0.4
3	Պայթուցիկ նյութի տեսակակար ծախսը	կգ/մ ³	0.2
4	Արտաչափսերի ծավալը՝ - տարեկան - ամսական	մ ³	915
		մ ³	76.25
5	Պայթուցիկ նյութի ծախսը՝ - տարեկան - ամսական	կգ	183
		կգ	15.25
6	Հորատման տեսակարար ծախսը	մ/ մ ³	1.25
7	Հորատման ընդհանուր ծախսը՝ - տարեկան - ամսական	մ	1144
		մ	95.3
8	Հորատման մուրճի արտադրողականությունը	մ/հերթ	40
9	Արտաչափսերի հորատման համար անհրաժեշտ հերթափոխերի թիվը՝ - տարեկան - ամսական	հերթափոխ	29
		հերթափոխ	2.4
6.	Աշխատանքի մեջ գտնվող հորատման մուրճի քանակը	հատ	1
7.	Հորատման մուրճերի ցուցակային քանակը	հատ	2

Պայթեցման աշխատանքների ժամանակ անվտանգ հեռավորությունները որոշվել են ըստ Անվտանգության միասնական կանոնների և կազմում են՝

- շենքերի և շինությունների համար (գրունտի տատանումներից)՝ 33.5մ
- հարվածային ալիքից շինությունների համար անվտանգ գոտու շառավիղը՝ 173մ
- պայթեցված կտորների թռիչքի անվտանգ գոտու շառավիղը՝

- մարդկանց համար՝ 300մ
- մեխանիզմների, կառույցների համար՝ 175մ

5.1.7. Բարձրան աշխատանքներ

Ջարդոտված, փշրված (խճի ու ավազի հումք) բազալտների բարձունքը KpA3-256B ավտոինքնաթափի մեջ կկատարվի ՅՕ-5122 մակնիշի 1.6մ³ շերտի տարողությամբ, միաշերտի, 350մ³/հերթ արտադրողականությամբ էքսկավատորի միջոցով:

1 հատ էքսկավատորը լիովին բավարար է հերթափոխում 70.38մ³ ծավալով անդեզիտաբազալտները և 1.03մ³-ը ծավալով մակաբացման ապարները ավտոինքնաթափերը բարձելու համար:

13400մ³ ծածկող ապարների շերտի տեղափոխությունը մինչև լցակույտ կատարվում է ավտոինքնաթափով, հերթափոխում 1.03մ³-ը էքսկավատորով բարձվում է KpA3-256B ինքնաթափը և տեղափոխվում լցակույտ, մինչև 0.5կմ հեռավորությամբ:

Բուլդոզերային աշխատանքները բացահանքում մակաբացման ապարների հեռացումն է, լցակույտերում աշխատանքը, ավտոճանապարհների բարեկարգումը: Այդ աշխատանքների կատարման համար անհրաժեշտ է 1 բուլդոզեր:

5.1.8. Լցակույտային տնտեսություն

Ելնելով նախագծում ընդունված մշակման եղանակից, ինչպես նաև լեռնաերկրաբանական պայմաններից ընտրված է արտաքին և ներքին լցակույտաառաջացում:

Ծածկող ապարների (անդեզիտաբազալտների տարաչափ բեկորներ պարունակող դեյուվիալ առաջացումներով ավազակավերը) հավաքումը կատարվում է բուլդոզերի օգնությամբ, որի 13400մ³ ծավալը ավտոինքնաթափով տեղափոխվում է բացահանքի հարավային մասում ձևավորվող N1 ժամանակավոր արտաքին լցակույտ:

Ծավալները հետևյալն են՝

Ավազակավեր՝ անդեզիտաբազալտների տարաչափ բեկորների կտորներով ավազակավեր	13400x1.2	16080 մ ³
---	-----------	----------------------

որտեղ 1.2-ը մշակման հետևանքով փխրեցման գործակիցներ են:

N1 լցակույտը զբաղեցնում է 1060մ² մակերես վերին մասում և 2290մ² ստորին հիմքում, բարձրությունը՝ միջինը 8.0մ:

Լցակույտը տեղադրված են ռելիեֆի թեքության վրա, նրա թեքման անկյունը կազմում է՝ a= 35⁰-ի:

Լցակույտաառաջացման ժամանակ մակաբացման ապարները բուլդոզերով և ավտոինքնաթափով տեղափոխվում են դեպի լցակույտը և փոխում թեքության վրա:

Նախագծով ընդունված բուլդոզերը օգտագործվում է լցակույտաառաջացման ժամանակ:

Հանքավայրի շահագործման 46-րդ տարվա վերջում N1 լցակույտից մակաբացման ապարները 12300մ³ ծավալով աստիճանաբար տեղափոխվում են արդյունահանված տարածքի վրա փոխվում 0.7մ բարձրությամբ և հարթեցվում ստեղծելով ներքին լցակույտաառաջացում:

Հանքավայրի շահագործումից հետո բացահանքում՝ վերակուլտիվացիոն աշխատանքների ժամանակ մակաբացման ապարների մնացած 1100մ³ ծավալը տեղափոխվում բացահանքի 1620.0մ բարձրության հատակը և փոխվում 0.7մ բարձրությամբ և հարթեցվում:

5.1.9. Բացահանքի ջրամատակարարումը և ջրհեռացումը

Բացահանքի ջրամատակարարումը տեխնիկական ջրով կատարվում է բարձման աշխատանքների ժամանակ փոշենստեցման, աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակույտերի ջրման նպատակով:

Ջուրը բերվում է KO-002 ջրցան-վացող ավտոմեքենայով: Խմելու ջրի մատակարարումը կատարվում է IIIH-BLB-1.4 ջրի ցիստեռնով:

Կենցաղային կեղտաջրերը լցվում են բետոնային հոր, որտեղից պարբերաբար տեղափոխվում են մոտակա կոյուղու ցանց:

5.1.10 Աշխատանքի պաշտպանությունը :

Արդյունաբերական սանիտարիան և անվտանգության տեխնիկական

Բացահանքերում բոլոր լեռնային աշխատանքները պետք է կատարվեն բաց եղանակով մշակվող հանքերի գործող անվտանգության միասնական կանոններին /ԱՄԿ/ և հանքավայրերի շահագործման տեխնիկական նորմերին /ՇՏԿ/ խստիվ համապատասխան:

Անվտանգության ապահովման կանոններից կարելի է նշել.

- բացահանքի ինժեներա-տեխնիկական աշխատողները պարբերաբար, ոչ ուշ քան 3 տարին մեկ անցնեն գիտելիքների ստուգման,
- յուրաքանչյուր բանվոր, անվտանգության տեխնիկայի գծով նախնական ուսուցումից հետո, պետք է անցնի ըստ մասնագիտության ուսուցման և հանձնի քննությունները,

- աշխատանքային յուրաքանչյուր տեղ աշխատանքներն սկսելուց առաջ հերթափոխի պետի կողմից պետք է մանրամասն զննվի: Աշխատանքներն սկսվելու համար պետք է տրվի գրավոր առաջադրանք,

- յուրաքանչյուր բանվոր, մինչ աշխատանքը սկսելը, պետք է համոզվի, որ իր աշխատատեղի անվտանգությունը ապահովված է,

- արգելվում է հանքախորշում հանգստանալը և այլն:

Պետք է ցանկապատվեն բացահանքի վերջնական եզրագծի սահմանները:

Լեռնատրանսպորտային սարքավորումները պետք է թույլ տան աշխատել միայն այն դեպքում, եթե նրանք սարքին են:

Փոշենստեցման նպատակով պետք է փոշեառաջացման օջախները /հանքախորշերը, լցակույտը, տեխնոլոգիական ավտոճանապարհները/ սիստեմատիկաբար ջրվեն:

Բացահանքի աշխատողներին սպասարկելու համար նախատեսվում է 1 հատ K-5 մակնիշի «Կոմֆորտ» սերիայի բեռնարկղային տիպի տնակ և ևս 1 տնակ նախատեսված որպես սանիտարակենցաղային սենյակ բեռնարկղային տիպի- «Տիպ 4» և հորանային տիպի արտաքնոց /սեպտիկ հոր/ 2 տեղանի, որը պարբերաբար մաքրվում է:

- ինվենտարային տնակը ունի 15 կախիչներ աշխատողների հագուստը կախելու համար,

- աշխատողներին միշտ ապահովել թարմ խմելու ջրով,

- բնական օդափոխմամբ ջրցողարանում նախատեսվել է 3 ցնցուղ, որն ապահովվում է հոսող ջրով, կախիչով, հեղուկ օճառով, էլեկտրական սրբիչով կամ միանվագ օգտագործման թղթյա անձեռոցիկներով:

- բացահանքի արդյունաբերական հրապարակում նախատեսվում է զուգարան, որում նախատեսվել է 2 ծորակներ ունեցող մեկ լվացարանով 2 սանիտարատեխնիկական սարքավորում, որը սահմանված կարգով պետք է դատարկվի:

5.2. Ջարդիչ կայան

5.2.1. Օգտագործվող հումքը, արտադրողականությունը և արտադրանքը

Ջարդիչ կայանքի միակ հումքը Կառնուտի հանքավայրի հանքաքարն է՝ անդեզիտաբազալտներ:

Աղյուսակ 5.4.

Անդեզիտաբազալտների քիմիական կազմը

Նմուշի համարը	Պ ա ր ու ն ա կ ու թ յ ու ն ն ե ր ը , % %									
	SiO ₂	Fe ₂ O ₃	TiO ₂	Al ₂ O ₃	CaO	MgO	SO ₃	Na ₂ O	K ₂ O	ԿՇՊ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	61.22	4.58	0.74	16.32	4.85	3.11	<0.10	3.65	2.75	1.11
3/1	59.62	5.05	0.88	17.22	4.91	3.32	<0.10	3.58	2.65	1.21
5/1	61.10	4.88	0.78	16.85	5.02	3.38	<0.10	3.75	2.66	0.88
Միջինը	60.65	4.84	0.80	16.80	4.93	3.27	<0.10	3.66	2.69	1.07

Բերված տվյալները վկայում են, որ տեղամասի անդեզիտաբազալտներն իրենց քիմիական կազմով բնութագրվում են գործնականում բավականին համասեռ քիմիական կազմով:

Քանի որ կայանքը սպասարկելու է միայն Կառնուտի հանքավայրի հանքաքարը, համապատասխանաբար կայանքի առավելագույն արտադրողականությունը կկազմի 18300մ³՝ ըստ հանքավայրի արտադրողականության: Հաշվի առնելով հանքաքարի տեսակարար զանգվածը՝ 2.7տ/մ³, արտադրողականությունը կկազմի՝ 49410տ/տարի:

Տարեկան աշխատանքային օրերի առավելագույն թիվը կկազմի՝ 260 օր, մեկ 8-ժամյա հերթափոխով:

Օրական և ժամային առավելագույն արտադրողականությունը կկազմեն՝

49410տ/տարի : 260 օր/տարի = 190տ/օր կամ 23.75տ/ժամ:

Կառնուտի տեղամասի անդեզիտաբազալտներից ստացված խճի և ավազի ֆիզիկամեխանիկական հատկությունների ուսումնասիրությունները կատարվել են ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության «ԱՆԱԼԻՏԻԿ» ՓԲԸ-ի լաբորատորիայում:

Կառնուտի տեղամասի անդեզիտաբազալտներից ստացվող խճի և ավազի պիտանիությունը շինարարական աշխատանքներում պարզելու նպատակով, 21 շաբաթային նմուշների ջարդման արդյունքում ստացված արգասիքներից տարանջատվել են խիճը և ավազը ու ենթարկվել ֆիզիկամեխանիկական փորձարկումների:

Աղյուսակ 5.5.

Խճի ֆիզիկամեխանիկական փորձարկումների տվյալները

Ցուցանիշների անվանումը (չափման միավորը)	Խիճ		
	նվազագույն	առավելագույն	միջին
Ավազի պարունակությունը ջարդման արգասիքներում	4.7	6.3	5.5
Լցման խտությունը, կգ/մ ³	1150	1211	1181
Ջրակլանումը, %	2.58	2.68	2.63
Փոշենման և կավային մասնիկների պարունակությունը %	0.55	0.82	0.68
Թերթային և ասեղնաձև հատիկների պարունակությունը, %	21.6	26.5	24.4
Խումբը ըստ հատիկների ձևի	2	3	2
Ջարդելիություն.			
- զանգվածի կորուստը, %			
5-10մմ	12.2	14.2	13.1
10-20մմ	11.5	14.5	13.6
- մակնիշն ըստ ջարդելիության (ամրության մակնիշը)	800	1000	848
Մակնիշն ըստ սառնակայունության	F25		
Ջանգվածի կորուստը ծծմբական նատրիումի լուծույթում (5 ցիկլ), %	5.2	6.8	6.0
Մաշելիություն			
- զանգվածի կորուստը, %			
5-10մմ	27.7	36.4	31.5
10-20մմ	24.6	37.8	30.8
- մակնիշն ըստ մաշելիության, %	II-2	II-3	II-2
Ընդհանուր ծծումբը վերահաշված SO ₃ -ի	<0.10		

5.2.2. Տեխնոլոգիական և տեխնիկական լուծումները

Կառնուտի հանքավայրի հանքաքարի մանրացման համար նախատեսվում տեղադրել 1 հատ CMԸ 109 տեսակի այտային ջարդիչ: Ջարդիչը տեղադրվում է մասնակի բետոնյա հիմքերի վրա:

Բազալտի հումքը Կառնուտի հանքավայրից բեռնատար մեքենաներով տեղափոխվում և բեռնաթափվում է ջարդիչի ընդունման հարթակում, որտեղից բեռնիչի միջոցով տրվում է բունկերի մեջ:

Հանքաքարի խոնավացումը ջարդիչի մուտքի մասում թույլ է տալիս զգալի կերպով նվազեցնել փոշու արտանետումները:

Բունկերից հանքաքարը ինքնահոս կերպով լցվում է ջարդիչի մեջ, որտեղ իրականացվում է բազալտի մանրացումը:

Մանրացված խիճը ջարդիչից բեռնվում է առաքման բեռնատարի մեջ: Տվյալ պահին պատվերի բացակայության դեպքում մանրացված հանքաքարը ժամանակավորապես կուտակվում է ջարդիչի մոտի հարթակում:

СМД 109 տեսակի այտային ջարդիչի տեխնիկական բնութագրերը բերված են արտադրող կազմակերպության տեխնիկական փաստաթղթում (Техническое описание и инструкция по эксплуатации), որը կցվում է սույն ՇՄԱԳ հաշվետվության հավելվածների մասում:

5.2.3. Ջրամատակարարում և ջրահեռացում

Ջարդիչ ջրամատակարարումը տեխնիկական ջրով կատարվում է Կառնուտի հանքավայրի ջրամատակարարման շրջանակներում:

Ջուրը բերվում է КО-002 ջրցան-լվացող ավտոմեքենայով: Խմելու ջրի մատակարարումը կատարվում է ШН-ВЛБ-1.4 ջրի ցիստեռնով:

Նախատեսվում է 1 ջրող ավտոմեքենա 6տ ջրի տարողությամբ, որը այդ ջուրը ցնցուղում է տաք և չոր եղանակներին, աշխատանքային հրապարակը կառող է ջրել 2 անգամ:

Ջրցան մեքենայի աշխատանքը կապահովվի պայմանագրային հիմունքներով:

Աշխատողներին սպասարկելու համար նախատեսվում է 1 հատ К-5 մակնիշի «Կոմֆորտ» սերիայի բեռնարկղային տիպի տնակ և 2 տեղանի հորանային տիպի արտաքնոց /սեպտիկ հոր/, որի տարողությունը պարբերաբար տեղափոխվում է մոտակա կայուղու ցանց հատուկ մեքենաների միջոցով:

Խմելու և տեխնիկական ջուրը բերվելու է մոտակա Կառնուտ բնակավայրից՝ պայմանագրային հիմունքներով:

5.3. Սանիտարապաշտպանիչ գոտի

Համաձայն 245-71 սանիտարական նորմերի, բաց եղանակով VIII-XI կատեգորիայի լեռնայինն ապարների արդյունահանումը դասվում է III դասին, որի համար ՍՊԳ-ն /սանիտարապաշտպանիչ գոտին/ սահմանված է 500 մ:

Համաձայն 245-71 սանիտարական նորմերի, բնական քարերի վերամշակման կազմակերպությունների ՍՊԳ-ն կազմում է 50մ:

Կառնուտ 1 տեղամասը և ջարդիչ կայանը Կառնուտ բնակավայրի ամենամոտ կառուցապատված տարածքից գտնվում են ավելի քան 500մ հեռավորության վրա:

6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

6.2. Կառնուտ 1 տեղամաս

6.2.1. Մթնոլորտային օդ

Լեռնային աշխատանքների հետևանքով օդային միջավայր է թափանցում որոշ քանակությամբ փոշի: Փոշու առաջացման աղբյուրներն են՝

1. ավտոտրանսպորտը
2. լցակայանը
3. բարձրան աշխատանքները
4. քարի կտրման աշխատանքները:

Օդային ավազան արտանետվող վնասակար նյութերն են՝

1. Անօրգանական փոշին (բուլղոզերային, էքսկավատորային, տրանսպորտային, հորատման աշխատանքներ, լցակայան):
2. Ազոտի և ածխածնի օքսիդներ և ածխաջրածինները (դիզելային ու բենզինային վառելիքով աշխատող մեխանիզմներ):

ա. Ավտոտրանսպորտի աշխատանքի ժամանակ առաջացած փոշու հաշվարկը

Ընդհանուր փոշու քանակը Q_1 , որը առաջանում է հանքի սահմաններում KpA3-256B -ի անիվների ու ճանապարհի շփման հետևանքով և տեղափոխվող բեռից որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$Q_{1\text{թ}} = \frac{C_1 C_2 C_3 C_6 C_7 N L q_1}{3600} + C_4 C_5 C_6 q_2 F n \quad , \text{ գ/վրկ}$$

որտեղ, C_1 - 1.3 գործակից է, որը հաշվի է առնում KpA3-256B -ի թափքի միջին տարողությունը,

C_2 - 2.0 գործակից, որը հաշվի է առնում մեքենայի միջին արագությունը,

C_3 - 1.0 գործակից, որը հաշվի է առնում ճանապարհի վիճակը,

C_4 - 1.2 գործակից, որը հաշվի է առնում տեղափոխվող բեռի մակերեսը թափքում,

C_5 - 1.1 գործակից, որը հաշվի է առնում տեղափոխվող բեռի արագությունը,

C_6 - 0.8 գործակից, որը հաշվի է առնում տեղափոխվող բեռի խոնավությունը,

C_7 - 0.01 գործակից, որը հաշվի է առնում մթնոլորտ տարվող փոշու մասը,

$n - 1$, երթերի թիվը

$L - 2$ կմ, մեկ երթի հեռավորությունը,

$N - 1$, մեքենաների քանակը,

$q_1 - 1450$ գ, 1 կմ վազանցի ժամանակ փոշու գոյացումն է,

$q_2 - 0.004$ գ/մ², թափքի մակերեսի 1 միավորից փոշու գոյացումն է,

$F - 12$ մ², մեքենայի թափքի մակերեսը:

$$Q_{1թ} = \frac{1.3 \times 2.0 \times 1.0 \times 0.8 \times 0.01 \times 1 \times 2 \times 1450}{3600} + 1.2 \times 1.1 \times 0.8 \times 0.004 \times 12 \times 1/3600$$

$$Q_{1թ} = 0.0675 \text{ գ/վրկ}$$

Տարեկան՝ 0.5 տ/տարի:

բ. Լցակայաններից առաջացած փոշու հաշվարկը

Լցակայանի բաց մակերևույթից փոշու արտանետումը որոշվում է «Сборник методики по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами». Гидрометеоиздат, 1986г.

Լցակայաններից առաջացող փոշու քանակը կհաշվվի հետևյալ բանաձևով՝

$$Q_2 = S W q, \text{ գ/վրկ},$$

որտեղ, S – լցակայանի մակերեսն է, – 890 մ²

$W - 0.000001$ կգ/մ²վրկ, փոշու տեսակարար հոսքն է և հանքավայրի

ջրհագեցվածությունը,

$q - 10$, լեռնային մասսայի մանրացման գործակիցն է:

$$Q_2 = 890 \times 0.000001 \times 10 = 0.0089 \text{ գ/վրկ},$$

Փոշու քանակի հաշվարկը տաք եղանակին (4-5 ամիս) որոշվում է հետևյալ կերպ.

$$Q_{\text{տ.ե.}} = \frac{Q_2 \times n \times N \times 3600}{1000000} = \frac{0.0089 \times 24 \times 130 \times 3600}{1000000} = 0.1 \text{ տ/տարի}$$

որտեղ, $Q_2 - 0.0089$ գ/վրկ, լցակայաններից առաջացած փոշու քանակն է,

$n - 24$ ժ, 1 օրում ժամերի քանակն է,

$N - 130$ օր, օրերի քանակն է:

գ. Բարձրման աշխատանքների ժամանակ առաջացող փոշու հաշվարկը

Բարձրագույն աշխատանքների ժամանակ առաջացող փոշին հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$P_1 \times P_2 \times P_3 \times P_4 \times P_5 \times C \times B_1 \times 10^6$$

$$Q_{3P} = \frac{\text{-----}}{3600}, \text{ գ/վրկ}$$

P_1 – 0.05, քարում փոշու ֆրակցիայի մասնիկն է;

P_2 – 0.02 ամբողջ փոշուց աերոզոլ թռչող փոշու մասն է 0.5 մկմ չափերով;

P_3 – 1.0 գործակից է, որը հաշվի է առնում քամու արագությունը

աշխատանքային հրապարակում;

P_4 – 0.2 գործակից է, որը հաշվի է առնում հանքաքարի խոնավությունը;

P_5 – 0.1 գործակից է, որը հաշվի է առնում հանքաքարի չափերը;

C – էքսկավատորի 1 ժամում կատարած աշխատանքն է բարձելու ժամանակ;

B_1 – 0.7 գործակից է, որը հաշվի է առնում ապարների թափվելը:

$$0.05 \times 0.02 \times 1.0 \times 0.1 \times 0.1 \times 0.7 \times 22.32 \times 10^6$$

$$Q_{3P} = \frac{\text{-----}}{3600} = 0.0434 \text{ գ/վրկ}$$

Տարեկան՝ 0.32 տ/տարի

դ. Հորատման աշխատանքների ժամանակ առաջացած փոշին կլինի

$$Q_4 = \sum \frac{n \times Z \times (1 - k)}{3600} = \frac{1 \times 360 \times (1 - 0.6)}{3600} = 0.04 \text{ գ/վրկ}$$

n -ը միաժամանակ աշխատող մեխանիզմների թիվն է;

k - փոշենստեցման գործակից է, հորատման մուրճի համար՝ 0.6;

Z -ը փոշու առաջացումն է հորատման մուրճի

աշխատանքի ժամանակ՝ 360գ/ժամ;

Տարեկան՝ 0.3 տ

ե. Պայթեցման ժամանակ առաջացած փոշին՝

$$Q = a_1 \times a_2 \times a_3 \times a_4 \times D \times 10^6, \text{ գ}$$

a_1 – 1կգ պայթուցիկ նյութից օդ գնացող փոշու քանակն է, 4

a_2 – աերոզոլ գնացող փոշու քանակն է, 0 – 50մկմ (միջինը $a_2 = 2 \times 10^{-5}$)

a_3 – գործակից, որը հաշվի է առնում քամու արագությունը պայթեցման տեղամասում
($a_3 = k_3 = 1.2$)

a_4 – գործակից, որը հաշվի է առնում հորատանցքերի ջրումը և նախօրոք

հորատանցքերի թրջումը, 0.7

Ճ – Պն-ի լիցքի մեծությունը, 36.74 կգ

$$Q = 4 \times 2 \times 10^{-5} \times 1.2 \times 0.7 \times 36.74 \times 10^6 = 2468.9 \text{ գ}$$

$$Q = 2468.9 \text{ գ}$$

մեկ անգամից 10 հորատանցք պայթեցնելու դեպքում՝ 24689գ

Պայայթեցման ենթակա է տարեկան 274 հորատանցք, որից առաջացած փոշու քանակը կլինի՝ $Q = 0.68 \text{ տ/տարի}$;

գ. Դիզելային վառելիք այրման արգասիքները

Դիզ.վառելիքի հետ կապված արտանետումները հաշվարկվում են “Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակների որոշման” մեթոդական հրահանգի³ հիման վրա:

Ըստ նշված մեթոդակարգի ծանր ավտոտրանսպորտի և տեխնիկայի տեսակարար արտանետումները բերված են ստորև աղյուսակ 6.1-ում:

Տեսակարար արտանետումներ (գ/կգ վառելիք)

Աղյուսակ 6.1.

Վառելիքի տեսակը	Նյութի անվանումը						
	NO _x	CH	ՑOU	CO	N ₂ O	CO ₂	ՊՄ
Դիզելային վառելիք	42.3	0.243	8.16	36.4	0.122	3138	4.3

Հաշվի առնելով, որ հանքում օգտագործվելու են նոր գնված տեխնիկական միջոցներ, պարկի տարիքի հետ կապված գործակիցները չեն կիրառվում:

Համաձայն նախագծի տվյալների արդյունահանման աշխատանքների ժամանակ դիզելային վառելիքի տարեկան ծախսը կկազմի՝ 13.2 տ/տարի:

Վառելիքի այրման ընթացքում առաջացող վնասակար նյութերի արտանետումները բերված են աղյուսակ 6.2-ում: Աղյուսակում միավորվել են ածխաջրածինները, ինչպես նաև ազոտի օքսիդները:

Աղյուսակ 6.2.

Ավտոմեքենայի կատեգորիան	Վնասակար նյութը	Տեսակարար արտանետումները, գ/կգ	Արտանետումները, գ/վրկ	Արտանետումները, տ/տարի
Մեծ բեռնունակության	CO	36.4	0.064	0.48
	CH	8.4	0.015	0.11

³ Մեթոդիկայում ընդունված է տրանսպորտային միջոցների դասակարգումը “Քոռ ինվեստորի օֆ էմիշոնս ին Երոփ” (այսուհետ՝ CORINAIR)՝ “Եվրոպայում մթնոլորտային արտանետումների բազային գույքագրում” մեթոդոլոգիային համապատասխան

ավտոտրանսպորտ	NO _x	42.3	0.075	0.56
	ՊՄ	4.3	0.008	0.06

Ծծմբային անհիդրիդ

Ծծմբային անհիդրիդի (SO₂) արտանետումները հաշվարկվում են ելնելով այն մոտեցումից, որ վառելիքում պարունակվող ամբողջ ծծումբը լիովին վերածվում է SO₂-ի: Այդ դեպքում կիրառվում է CORINAIR գույքագրման համակարգի բանաձևը.

$$ESO_2 = 2 \sum ks_b, \text{ որտեղ }`$$

ks-ը վառելիքում ծծմբի միջին պարունակությունն է՝ 0.002 տ/տ

b –ն վառելիքի ծախսն է՝ 13.2 տ/տարի

$$SO_2 = 2 \times 13.2 \times 0.002 = 0.053 \text{ տ/տարի կամ } 0.007 \text{ գ/վրկ:}$$

6.2.2. Ջրային ավազան

Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ հանքարդյունահանման աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում: Գործունեության համար ենթակա տարածքներում ստորերկրյա ջրերը բացակայում են:

Քանի որ նախատեսվող գործունեությունը գտնվում է Ախուրյան գետից 1.9կմ, իսկ ջրամբարից 0.7կմ հեռավորության վրա, ուստի հանքավայրի շահագործումը էական ազդեցություն չի կարող ունենալ ջրային ռեսուրսների վրա :

Բացահանքի ջրամատակարարումը տեխնիկական ջրով կատարվում է բարձման աշխատանքների ժամանակ փոշենստեցման, աշխատանքային հրապարակների, ճանապարհների, հանքաքարի խոնավացման և լցակույտերի ջրման նպատակով:

Ջուրը բերվում է ցիստեռն KO-713 Զիլ 431412 ջրցան-լվացող ավտոմեքենայով: Խմելու ջրի մատակարարումը կատարվում է ջրի ցիստեռնով:

Աշխատանքների խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը հաշվարկվում է հետևյալ արտահայտությունով՝

$$W = (n \times N + n_1 \times N_1) T$$

որտեղ՝ n - ԻՏ և գրասենյակային աշխատողների թիվն է - 4

N - ԻՏԱ ջրածախսի նորման՝ - 0.016մ³,

n_1 - Բանվորների թիվն է - 11,

N_1 - ջրածախսի նորման՝ - 0.025մ³/մարդ օր

T - աշխատանքային օրերի թիվն է - 260օր:

Այսպիսով՝ $W = (4 \times 0.016 + 11 \times 0.025) 260 = 88.14$ մ³/տարի, միջին օրեկան 0.339մ³:

Կենցաղային կեղտաջրերը՝ $0.399 \times 0.85 = 0.29$ մ³ օրեկան լցվում են բետոնային լցարան, որտեղից պարբերաբար տեղափոխվում են մոտակա մաքրման կայան:

Համաձայն նորմատիվների ջրի ծախսը 1մ² տարածքում փոշին նստեցնելու համար կազմում է 0.5լիտր/մ²: Փոշենստեցման մակերեսները կազմում են բացահանքում աշխատանքային հրապարակը 1400մ², լցակույտի վրա 2290մ² և ավտոճանապարհների վրա 3500մ², ՋՏԿ- ի բարձման և բեռնաթափման հրապարակը և նրա շրջակայքը՝ 2500մ² ընդամենը 9690մ²: Ընդունելով ջրի տեսակարար ծախսը 0.5լ/մ², կստանանք $9690 \times 0.5 = 4845$ լիտր:

Նախատեսվում է 1 ջրող ավտոմեքենա 6տ ջրի տարողությամբ, որը այդ ջուրը ցնցողում է տաք և չոր եղանակներին, աշխատանքային հրապարակը կարող է ջրել 2 անգամ, և ՋՏԿ- ի բարձման և բեռնաթափման հրապարակը կարող է ջրել 2-3 անգամ:

Ջրցան մեքենայի աշխատանքը կապահովվի պայմանագրային հիմունքներով:

Հողային ծածկույթ

Համաձայն երկրաբանական ուսումնասիրության հաշվետվության հայցվող հանքավայրի ողջ տարածքում հողաբուսական շերտը բացակայում է: Ուստի հողային ռեսուրսների պահպանությանն ուղղված միջոցառումներ նախատեսված չեն:

6.2.3. Աղմուկ

Արդյունահանման աշխատանքների ժամանակ տեխնիկական միջոցների շահագործման ընթացքում առաջանում է աղմուկ:

Հանքավայրերում տեխնիկայի և բեռնատար տրանսպորտի աշխատանքներից գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը սահմանված է 80 ԴԲԱ (համաձայն գործող ներմերի):

Հանքավայրի տարածքում աղմուկի առաջացման աղբյուրներն են՝

- Բացահանքը
- լցակույտը
- ավտոտրանսպորտը

Աղմուկից պաշտպանվող օբյեկտ հանդիսանում է Կառնուտ գյուղը, որը գտնվում է հանքավայրից մոտ 0.5կմ հեռավորության վրա:

Քանի որ մոտակա գյուղը գտնվում է աղմուկի աղբյուրից բավականին հեռու, ապա աղմուկի մակարդակը հաշվարկվում է սանիտարա-պաշտպանիչ գոտու սահմանին (հեռավորությունը աղմուկի աղբյուրից 500մ):

Հանքավայրերում տեխնիկայի և բեռնատար տրանսպորտի աշխատանքներից գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը LAէկվ սահմանված է 79ԴԲԱ (համաձայն գործող նորմերի):

Աղմուկի մակարդակը աղմուկից պաշտպանող տարածքի հաշվարկային կետում որոշվում է՝

LAտար = LAէկվ - ΔLAհեռ - ΔLAէկր - ΔLAկանաչ

Որտեղ՝

LAէկվ - աղմուկի աղբյուրի ձայնային բնութագիրը, LAէկվ=79ԴԲԱ

ΔLAհեռ - աղմուկի մակարդակի նվազումը հաշվարկային կետի և աղմուկի աղբյուրի միջև հեռավորությունից կախված

ΔLAհեռ 500մ-ի վրա կազմում է 28ԴԲԱ

ΔLAէկր - աղմուկի մակարդակի նվազումը էկրանով: ΔLAէկր =14ԴԲԱ Հանքի տարածքը տվյալ դեպքում ծառայում է որպես էկրան:

ΔLAկանաչ- աղմուկի մակարդակի նվազումը կանաչ շտիպով, ΔLAկանաչ=0ԴԲԱ
Աղմուկի մակարդակը սանիտարա-պաշտպանիչ գոտու սահմանին կկազմի՝ LAտար = LAէկվ - ΔLAհեռ - ΔLAէկր - ΔLAկանաչ = 79 - 28 - 14 = 37ԴԲԱ

Հաշվի առնելով հանքավայրի հեռավորությունը մոտակա բնակավայրերից նախալեռնաթեքվածքային, ձորակներով խիստ մասնատված ռելիեֆը, մեկ հերթափոխով աշխատանքային ռեժիմը՝ գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը շրջակա բնակավայրերի տարածքում կլինի բնակելի գոտիների համար սահմանված նորմերից

/45ԴԲԱ/ շատ ցածր:

Աղմուկի մակարդակը գիշերային ժամերին գտնվում է նորմերի սահմաններում և կազմում է 32դԲԱ (նորման 35դԲԱ):

6.2.4. Բուսական և կենդանական աշխարհ

Հանքավայրի աշխատանքների բացասական ազդեցությունը հանքավայրի տարածաշրջանի բուսական և կենդանական աշխարհի վրա աննշան է: Ինչպես նշվել ցույց են տվել նախնական ուսումնասիրությունները, տեղամասի տարածքում բացակայում է բուսական ծածկը, չկան անտառներ, չեն արձանագրվել բույսերի և կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներ, հետևաբար հանքարդյունահանման աշխատանքները չեն հանգեցնի տարածքի էկոհամակարգերի վրա նշանակալից բացասական ազդեցության:

6.3. Ջարդիչ կայան

6.3.1. Ազդեցություն մթնոլորտային օդի որակի վրա

Մթնոլորտային օդի վրա ազդեցությունը պայմանավորված է ջարդիչի աշխատանքով, որի արդյունքում առաջանում է անօրգանական փոշի:

Ջարդման գործընթացը ջարդիչ կայանքում իրականացվում է տեխնոլոգիական շղթայի միջոցով, որի կազմի մեջ մտնում են՝ բունկեր, ժապավենային սնիչ և ջարդիչ:

ա. Բունկեր և փոխակրիչ

Ջարդիչ կայանքի բունկերի և փոխակրիչների արտանետումների հաշվարկը իրականացվել է ըստ Методика по расчету валовых выбросов загрязняющих веществ в атмосфере предприятиями Россевзапстрой. ВРД 66-125-90. М, 1991.

Համաձայն այդ ձեռնարկի փոշու առավելագույն քանակը վարկյանում հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$G_n = C/3600 \times 1000 \times Kr \times K_5 \times K_7, q/vրկ, \text{ որտեղ՝}$$

C – տեսակարար փոշեառաջացումը, ըստ ձեռնարկի 3-րդ հավելվածի՝ 30 կգ/ժամ

Kr – գործակից, որը հաշվի է առնում գրավիտացիոն նստեցումը, 0.4 (ВРД 66-125-90)

K_5 – գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը, 0.2

K_7 – գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը, 0.1

$$G_n = 30/3600 \times 1000 \times 0.4 \times 0.2 \times 0.1 = 0.067q/vրկ$$

Տարեկան՝ $0.067 \times 3600 \times 260 \times 8 : 10^6 = 0.5$ տ/տարի:

բ. Ջարդիչ

Ջարդիչների հաշվարկը իրականացվել է ըստ «МЕТОДИКА расчета вредных выбросов (сбросов) для комплекса оборудования открытых горных работ (на основе удельных показателей)». Министерство топлива и энергетики Российской Федерации

Ըստ սույն ձեռնարկի առանց փոշեկլանման համակարգի աշխատող ժամանակակից ջարդիչների փոշու տեսակարար արտանետումների գործակիցը հավասար է՝ 7.8 գ/տ հանքաքար:

$G_m = 49410$ տ/տարի $\times 7.8$ գ/տ = 385398 գ կամ 0.385 տ/տարի:

Վարկյանում կկազմի՝ 0.051 գ/վրկ:

Ընդամենը տարեկան արտանետումները կկազմեն՝

$0.5 + 0.385 = 0.885$ տ/տարի:

Վարկյանում՝ $0.067 + 0.051 = 0.118$ գ/վրկ:

Արտանետումների ազդեցությունը գնահատելու նպատակով սույն հաշվետվության շրջանակներում կատարվել է արտանետումների ցրման և սպասվող գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկ:

Հաշվարկում ներառվել են Կառնուտի հանքավայրի տեղամաս 1-ի և ջարդիչ կայանի անշարժ աղբյուրների արտանետումները:

Արտանետումների ազդեցությունը գնահատելու համար իրականացվել է վնասակար նյութերի ցրման և գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկ: Հաշվարկում ներառվել են ջարդիչ կայանի և հանքավայրի անշարժ աղբյուրների արտանետումները: Հանքավայրի արտանետումների աղբյուր ընդունվել է բացահանքի տեղամասի աշխատանքային հարթակը՝ որպես անկազմակերպ աղբյուր:

Հանքարդյունահանման և ջարդիչ կայանի արտանետումները ներկայացված են ըստ աղբյուրների տեսակի աղյուսակ 6.3-ում:

Աղյուսակ 6.3. Արտանետումների քանակները և աղբյուրների տեսակները

№	Արտանետման տեղամասի կամ աշխատանքի անվանումը	Աղբյուրի տեսակը	Արտանետվող նյութը	Արտանետումների քանակները	
				գ/վրկ	տ/տարի
1	Մեքենաների ներքին տեղաշարժը	Շարժական	Անօրգանական փոշի	0.5578	4.18
2	Լցակույտ	Անշարժ	Անօրգանական փոշի	0.229	2.57

3	Բարձրան աշխատանքներ	Անշարժ	Անօրգանական փոշի	0.2083	1.56
4	Հորատման աշխատանքներ	Անշարժ	Անօրգանական փոշի	0.04	0.3
5	Պայթեցումներ	Անշարժ, զարկային	Անօրգանական փոշի	-	0.68
6	Ջարդիչ կայան	Անշարժ	Անօրգանական փոշի	0.318	2.385
7	Դիզելային վառելիքի այրում շարժիչներում	Շարժական	CO	0.064	0.48
			CH	0.015	0.11
			NO ₂	0.075	0.56
			Պինդ մասնիկներ /մոխիր/	0.008	0.06
			SO ₂	0.007	0.053

Արտանետման աղբյուրների բնութագրերը և արտանետումների քանակները հանքավայրի և ջարդիչ կայանի համար բերված են աղյուսակ 6.4-ում:

Աղյուսակ 6.4. Արտանետումների աղբյուրների բնութագրերը և արտանետումների քանակները

Արտադրության, տեղամասի անվանումը	Արտանետումների առաջացման աղբյուրները		Արտանե- ման աղբյուրը	Արտա- նետման աղբյուրի համարը	Արտանե- ման աղբյուրի բարձրու- թյունը, H, մ	Աղբյուրի տրամա- զիծը, մ	Արտանե- ման արագու- թյունը, մ/վրկ	Արտանե- ման ջերմաստի- ճանը T°C
	անվանումը	քանակը						
1	2	3	4	5	6	7	8	9
Ջարդիչ կայանք	Ջարդիչ և փոխակրիչ	1	հարթակ	1	4.0	6.0	3.0	18
Բացահանք	Աշխատանքային հարթակ	1	հարթակ	2	2.5	50.0	3.0	18

Աղյուսակ 6.3-ի շարունակությունը

Մաքրման ենթակա նյութերը	Մաքրման միջին աստիճանը	Աղբյուրի կոորդինատները քարտեզ սխեմայի վրա				Նյութերի անվանումը	Արտանետումների քանակները	
		X ₁	X ₂	Y ₁	Y ₂		գ/վրկ	տ/տարի
Ապահովվածության գործակիցը, %	Մաքրման առավել. չափը, %	1 2	1 3	1 4	1 5	1 6	1 7	1 8
1 0	1 1	50	56	20	26	Փոշի անօրգանական	0.318	2.385
-	-	45	95	170	220	Փոշի անօրգանական	0.4773	4.43

Քամու վտանգավոր արագություն՝ 24 մ/վրկ, T = 25.4°C (օդերևութաբանական ծառայության տեղեկանքը կցվում է)

Գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկների արդյունքները

Մթնոլորտում վնասակար արտանետումների ցրման հաշվարկները կատարվել են համակարգչի վրա, «Ռադուգա» ծրագրով, 6.4-րդ աղյուսակում բերված տվյալների հիման վրա:

Հաշվարկներում հաշվի չի առվել ֆոնային աղտոտվածությունը, քանի որ կայանքը գտնվում է մոտակա բնակավայրից ավելի քան 500 մ հեռավորության վրա և այստեղ ներառվել են մերձակա հանքավայրի արտանետումները, իսկ այլ փոշու անշարժ աղբյուր տեղանքում չկա

Հաշվարկներով որոշվում են.

- հաշվարկային կետի կոորդինատները, մ;
- վնասակար արտանետումների գետնամերձ կոնցենտրացիաները ՄԹԿ մասով;
- ջահի առանցքի ուղղությունը;
- քամու արագությունը մ/վրկ-ով, որի դեպքում հաշվարկային կետում գետնամերձ կոնցենտրացիան հասնում է առավելագույն արժեքին:

Հաշվարկների արդյունքները բերված են Հավելված 1-ում:

Աղտոտվածության առավելագույն մակարդակը կազմել է՝ 0.19 ՄԹԿ, ինչը զգալիորեն ավելի ցածր է թույլատրելի նորմից:

6.4. Ջրային ռեսուրսներ

6.4.1. Ջրօգտագործում

«ԱԽՈՒԲՅԱՆԻ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ» ՍՊ ընկերության կողմից ջարդիչ կայանքի աշխատանքի համար անհրաժեշտ ջրամատակարարումն իրականացվելու է Կառնուտի հանքավայրի ջրամատակարարման ցանցից: Տարածքում նախատեսված է տեղադրել նաև 1 հատ ջրի պահուստային տարողություն:

Ջուրը օգտագործվելու է հանքաքարի խոնավացման և սպասարկող անձնակազմի կենցաղային կարիքների համար:

Արտադրական ջրօգտագործում

Արտադրական կարիքների ջրօգտագործումը ընդգրկում է ջարդիչի մուտքի մոտ հանքաքարի խոնավացումը և կուտակված հանքաքարի ու մանրացված քարի պահեստների ջրցանը:

Հանքաքարի խոնավացում

Հաշվարկը կատարվել է հետևյալ կերպ.

Wջար. = Lտես x Q, որտեղ`

Wջար.` ջարդիչների ջրապահանջը, մ³/տարի

Lտես.` ջրի տեսակարար ծախսը մեկ մ³ հանքաքարի հաշվարկով, ճլ/տ

Q` ջարդվող հանքաքարի քանակը, 49410 տ/տարի:

Wջար. = 8 լ/տ x 49410 տ/տարի = 395280 լ կամ 395.3 մ³/տարի:

Միջին օրական` 395.3 մ³/տարի : 260 օր/տարի = 1.52 մ³/օր:

Պահեստների ջրցան

Ջրցանը հաշվարկվում է ըստ պահեստների ընդհանուր մակերեսի և ջրի տեսակարար ծախսի.

Wպահ. = Kտես x S x P, որտեղ`

Wպահ.` ջրապահանջը, մ³/տարի

Kտես` ջրի տեսակարար ծախսը մեկ ք.մ. հաշվարկով, 1.5լ/մ²

S` պահեստների ընդհանուր մակերեսը, 500 մ²:

P` ջրցանի օրական քաբակը, 2

Wպահ. = 1.5լ/մ² x 500 մ² x 2 = 1500 լ/օր կամ 1.5 մ³/օր:

Տարեկան ծավալը հաշվարկվում է տաք եղանակի չոր օրերի հիման վրա /առանց շաբաթ և կիրակի օրերի/.

1.5 մ³/օր x 132 օր/տարի = 198 մ³/տարի:

Խմելու-տնտեսական կարիքներ

Աշխատանքային ռեժիմը` 260 օր/տարի, մեկ հերթափոխով` 8 ժամ/օր:

Սպասարկումը իրականացնելու են 4 բանվոր և մեկ ԻՏԱ:

Ջրի հաշվարկային ծախսերը որոշվում են համաձայն ՇՆ 2.04.01-25 չափաքանակների:

Աշխատողների խմելու և կենցաղային պահանջների համար ջրածախսը կազմում է՝

$$W_{\text{խ.տ.}} = (n_1 \times N_1 + n_2 \times N_2) \times T, \text{ որտեղ}$$

n_1 – ԻՏԱ թվաքանակն է՝ 1 մարդ

N_1 – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n_2 – բանվորների թվաքանակն է՝ 4 մարդ

N_2 – բանվորների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T - աշխատանքային օրերի թիվն է՝ 260օր

$$W_{\text{խ.տ.}} = (1 \times 0.016 + 4 \times 0.025) \times 260 = 30.2 \text{ մ}^3/\text{տարի:}$$

Օրական՝ 0.116 մ³/օր:

6.4.2. Ջրահեռացում

Նախատեսվող գործունեության արդյունքում արտադրական արտահոսք չի առաջանում: Ջարդիչների հանքաքարի խոնավացումը և պահեստների ջրցանը ամբողջությամբ հանդիսանում է կորուստ:

Տնտեսակենցաղային հոսքաջրերի հաշվարկային քանակը կկազմի՝

$$W_{\text{կենցաղ.}} = W_{\text{խ.տ.}} \times (1 - \Psi), \text{ որտեղ՝}$$

Ψ ՝ կորուստները, 5 տոկոս /0.05/,

$$W_{\text{խ.տ.}}՝ 30.16 \text{ մ}^3/\text{տարի:}$$

$$W_{\text{կենցաղ.}} = 30.16 \times (1 - 0.05) = 28.65 \text{ մ}^3/\text{տարի կամ } 0.11 \text{ մ}^3/\text{օր:}$$

Տնտեսակենցաղային հոսքաջրերը կհեռացվեն արտադրական հրապարակում նախատեսվող անջրթափանց հոր:

Արտադրական տարածքներում հոսքաջրեր չեն առաջանա: Տարածքից անձրևաջրերի հեռացման կամ ջրցանից առաջացող հնարավոր արտահոսքերի համար արտադրական հրապարակի ցածրադիր մասում նախատեսված է պարզարան, որտեղ կուտակված հոսքաջրերը կենթարկվեն մեխանիկական մաքրման, որից հետո պարզված ջրերը կարող են օգտաործվել արտադրական նպատակով:

Արտադրական և տնտեսա-կենցաղային ջրօգտագործման և ջրահեռացման հաշվեկշիռ

Աղյուսակ 6.5.

Ջրօգտագործման նպատակը	Ջրօգտագործում, մ ³ /տարի	Ջրի կորուստ		Ջրի անվերադարձ օգտագործում, մ ³ /տարի	Ջրահեռացում մ ³ /տարի
		%	մ ³ /տարի		
Արտադրական					
Հանքաքարի խոնավացում	395.3	100	395.3	-	-
Ջրցան	198.0	100	198.0	-	-
<i>Ընդամենը արտադրական</i>	593.3	-	593.3	-	-
Խմելու տնտեսական					
Աշխատողների խմելու կարիքներ	30.2	5	1.55	-	28.65
<i>Ընդամենը</i>	623.5		594.85	-	28.65

6.5. Թափոններ

Հանքավայրի և ջարդիչ կայանի շահագործման ընթացքում կարող են առաջանալ տարբեր բնույթի թափոններ: Թափոններ կարող են առաջանալ հանքաքարի արդյունահանման, ավտոտրանսպորտային և տեխնիկայի սպասարկման, մատակարարման, աշխատողների կենցաղային սպասարկման արդյունքում:

Այս թափոնները, ըստ ՀՀ ԲՆ 2015թ. օգոստոսի 20-ի <<ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 342-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> թիվ 244-Ն հրամանի դասակարգվել և ներառվել են թափոնների ցանկում հետևյալ ձևակերպմամբ՝

Շահագործման փուլում առաջացող թափոնները ներառում են.

ա) Լեռնակապիտալ աշխատանքների և բացահանքի շահագործման ժամանակ կառաջանան մակաբացման ապարներ, որոնց ընդհանուր ծավալը կկազմի՝ 13400 մ³:

Մակաբացման ապարները կտեղափոխվեն լցակույտ /դիրքը տես բացահանքի գլխավոր հատակածում/: Բացահանքի շահագործման 46-րդ տարուց հետո մակաբացման ապարները կտեղափոխվոն բացահանքի ազատ մասը:

բ) Բանեցված շարժիչների յուղերի թափոններ՝ 0.15 տ/տարի

Դասիչ՝ 5410020102033

Բաղադրությունը՝ նավթ, պարաֆիններ, սինթետիկ միացություններ:

Բնութագիրը՝ հրդեհապայթյունավտանգ է, առաջացնում է հողի և ջրի աղտոտում:

Թափոնները առաջանում են ավտոտրանսպորտային և տեխնիկական միջոցների շարժիչների շահագործման արդյունքում: Յուղերը հաշվարկված են որոշակի ժամանակամիջոցի համար, որից հետո կորցնելով իրենց անհրաժեշտ հատկությունները փոխարինվում են նոր քանակներով:

Շահագործման փուլում տեխնիկայի վերալիցքավորումը կամ յուղի փոխման գործընթացը նախատեսվում է իրականացնել տեխ. սպասարկման հատուկ կետերում:

գ) Իրենց սպառողական հատկությունները կորցրած դիզելային յուղերի մնացորդներ՝ 0.2 տ/տարի:

Դասիչ՝ 5410030302033

Բաղադրությունը՝ նավթ, պարաֆիններ, սինթետիկ միացություններ:

Բնութագիրը՝ Հրդեհապայթյունավտանգ է:

Թունավոր է շրջակա միջավայրի համար, առաջացնում է հողի և ջրի աղտոտում:

Թափոնները առաջանում են մեխանիզմների շահագործման արդյունքում: Կորցնելով իրենց անհրաժեշտ հատկությունները յուղերը պարբերաբար փոխարինվում են նոր քանակներով:

Շահագործման փուլում տեխնիկայի վերալիցքավորումը կամ յուղի փոխման գործընթացը նախատեսվում է իրականացնել տեխ. սպասարկման հատուկ կետերում:

գ) Բանեցված դողածածկաններ՝ 0.2 տ/տարի:

Դասիչ՝ 5750020213004

Բաղադրությունը՝ ռետին-95%, մետաղյա լարեր (կորդ) -5%:

Բնութագիրը՝ հրդեհավտանգ է:

Թափոնները առաջանում են ավտոտրանսպորտային և տեխնիկական միջոցների շահագործման արդյունքում: Դողածածկանները պարբերաբար փոխարինվում են նորերով:

Թափոնները հավաքվում և ժամանակավոր պահպանվում են դրանց համար նախատեսված տարածքներում, հետագայում պայմանագրային հիմունքներով վաճառվելու կամ հանձնվելու են նման թափոնների գործածության լիցենզիա ունեցող ընկերություններին:

դ) Բանեցված կապարե կուտակիչներ և խոտան՝ 0.1տ/տարի:

Դասիչ՝ 92110100 13 012

Բաղադրությունը՝ կապար պարունակող ցանցեր, կապարի օքսիդներ և ծծմբական թթու պարունակող լուծույթներ, պլաստիկ կաղապարներ:

Բնութագիրը՝ հրդեհապայթյունավտանգ չէ, թունոնակ է, թունավոր շրջակա միջավայրի և մարդկանց առողջության համար, ծծմբական թթուն առաջացնում մաշկի այրվածքներ:

Թափոնները առաջանում են ավտոտրանսպորտային և տեխնիկական միջոցների շահագործման արդյունքում: Կապարե կուտակիչները պարբերաբար փոխարինվում են նորերով:

Օգտագործված կապարե կուտակիչները հավաքվում են ավտոտնտեսության առանձին սենյակում, այնուհետև վաճառվում կուտակիչների թափոնի առևտրով զբաղվող կազմակերպություններին:

զ) Կենցաղային աղբ

Թափոնը կուտակվում է աղբամաններում և ըստ համապատասխան պայմանագրի տեղափոխվում է Ախուրյանի համայնքապետարանի կողմից հատկացված աղբավայր:

Քանակը՝ 3.6 տ/տարի:

Առաջանալուն պես թափոններն անմիջապես ընկերության բեռնատար մեքենաներով տեղափոխվում են համապատասխան լիցենզավորված կազմակերպությունների ընդունման կետեր, կամ աղբավայրեր:

6.6. Ազդեցությունը կենդանական և բուսական աշխարհի վրա

Ներկայացվող գործունեությունը նախատեսվում է իրականացնել Կառնուտ բնակավայրից ավելի քան 500 մ հեռավորության վրա՝ գործող հանքավայրի մոտ: Տարածքը զուրկ է բուսական ծածկույթից: Բուսական և կենդանական աշխարհի հետ որևէ առնչությունը, կամ ազդեցությունը բացակայում է:

Պետք է փաստել, որ դիտարկվող տարածքում, որտեղ արտադրամասի և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը՝ լանդշաֆտը դեգրադացված է (առկա են շահագործված հանքավայր, կամ իրականացվում են ընդերքօգտագործման աշխատանքների): Այդ տարածքներում կենդանատեսակների հանդիպելը քիչ հավանական է, քանի որ տրամադրվող տարածքը գտնվում է անմիջապես ճանապարհի հարևանությամբ, առկա է տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ:

6.7. Սոցիալական ազդեցությունը

Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում հիմնական սոցիալական ազդեցությունները կապված են մեքենաների և տեխնիկայի տեղաշարժից փոշու և ծխագազերի արտանետումներով, աղմուկի առաջացմամբ, երթևեկության ինտենսիվացման հետ կապված, աշխատողների աշխատանքի անվտանգության հետ կապված և սոցիալական այլ գործոնների հետ կապված: Արտադրական գործընթացների ընթացքում հնարավոր բացասական ազդեցությունների շարքում կարելի է թվարկել հետևյալները՝

- օդային ավազանի աղտոտում՝ հումքի, արտադրանքի տեղափոխման և հանքաքարի ջարդման ընթացքում,
- հումքի տեղափոխման հետ կապված մերձակա բնակչությանը /Կառնուտ բնակավայր/ պատճառվող անհանգստություն և անհարմարություններ
- ծանր, բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների շարժի պատճառով երթևեկության ավելացում, ինտենսիվացում,
- աղմուկի մակարդակի ավելացում՝ ջարդիչների և տրանսպորտային միջոցների աշխատանքի արդյունքում,
- տեսանելի պատկերի փոփոխություն, քանի որ ջարդիչները տեղադրվելու են բաց տարածքում,

- բարձրագույն, կույտերի առաջացման ժամանակ, քամիների որոշակի ուղղության դեպքում փոշու տարածում շրջակա տարածքներ
- արտադրական գործընթացներում աշխատողների առողջությանը հասցվող վնաս՝ գործունեության իրականացման ընթացքում:
- կենդանական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ:

Սակայն հաշվի առնելով մոտակա բնակելի տարածքներից արտադրական տարածքի հեռավորությունը /ավելի քան 500մ հեռավորությունների վրա/ սոցիալական ազդեցությունները էական չեն լինի:

Հնարավոր սոցիալական ազդեցությունների կանխարգելման, նվազեցման, կամ մեղմացման համար 8-րդ գլխում /<<Սոցիալական ազդեցությունների մեղմման միջոցառումներ>>/ և Բնապահպանական կառավարման պլանում ներկայացվել են միջոցառումների ծրագիր:

Միևնույն ժամանակ արտադրամասի շահագործումը թույլ կտա ստեղծել աշխատատեղեր ինչպես անմիջապես քարամշակման արտադրամասում, այնպես էլ սպասարկող ծառայություններում: Դրանով իսկ բազմաթիվ ընտանիքներ կբարելավեն իրենց սոցիալատեսական պայմանները: Սպասարկող անձնակազմի ընտրության ժամանակ առաջնահերթություն է տրվելու տեղի բնակչությանը:

6.8. Կուրսային (հավաքական) ազդեցություն

Նախատեսվող գործունեության ազդեցությունը լիարժեքորեն գնահատելու համար անհրաժեշտ է այն դիտարկել տարածքի բոլոր աղտոտող գործոնների հետ համալիր և շրջանի պոտենցիալի ենթատեքստում:

Տեխնածին ազդեցության տեսակետից հանքավայրի և ջարդիչ կայանքի շրջանում հիմնական աղտոտիչի՝ փոշու աղբյուր են հանդիսանում ավտոտրանսպորտային միջոցները: Սակայն տրանսպորտային միջոցների երթևեկությունը ինտենսիվ չէ և չի կարող ունենալ հավաքական /կուրսային/ էֆեկտ:

7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատումն իրականացվում է ըստ շրջակա միջավայրի բաղադրիչների: Տնտեսական վնասը հաշվարկվում է համաձայն ՀՀ կառավարության 27.05.2015 N764-Ն որոշման:

Հնարավոր տնտեսական վնասը հաշվարկվում է՝

$$ՎՏ = ՀԱԳ + ՋԱԳ + ՕՍԳ,$$

որտեղ՝

ՎՏ-ն հնարավոր տնտեսական վնասն է դրամային արտահայտությամբ,

ՀԱԳ-ն հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով (բնական միջավայրի աղտոտում, բնական ռեսուրսների աղքատացում, էկոհամակարգերի քայքայմանը կամ վնասմանը հանգեցնող շրջակա միջավայրի բացասական փոփոխություններ) պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 92-Ն որոշման համաձայն:

ՋԱԳ-ը ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության ուղղակի և անուղղակի ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 14-ի N 1110-Ն որոշման համաձայն:

